

## ԶԻԼԻԻ ԾԵՐԱԿՈՅՏԸ ԾԱՆՉՑԱԲ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի Արտաքին Գործոց նախարարության հաղորդագրության համաձայն, Չիլիի Մերակոյար միաձայնությունում ընդունված է որոշում, կոչ ընելով երկրի կառավարության՝ զորակցելու հայ ժողովուրդին եւ դատապարտելու անոր նկատմամբ իրագործված ցեղասպանությունը:

Սոցիալիստական կուսակցության կողմից ներկայացրած փաստաթուղթին մէջ մասնաւորաբար ըստւած է - «1915-1923 թուականներու ընթացքին դաժանորէն իրագործուած ցեղասպանութեան հետեւանքով, Կայսրութեան աւելի քան 1.5 միլիոն ազգութեամբ հայ հպատակներ, որոնք հազարամեակներ շարունակ կը բնակէին իրենց նախնիներու հողերուն վրայ, գրկուեցան կեանքէ»:

«Այս փաստը ճանչցած են Ուրուկուէյը, Արժանթինը, Յունաստանը, Պուերթրիան, Ռուսաստանը, Իտալիան, Լիբանանը, Շուէտը, Զուիցերիան, Հոլանտան, Վենեզուէլլան, Լատվիան, Գանատան եւ Ֆրանսան, ինչպէս նաեւ Եւրախորհրդարանը, Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդը եւ ժողովուրդներու Մնայուն Դատարանը»:

Կառավարութեան ուղղուած կոչին մէջ ըստւած է նաեւ որ, Չիլիի բարոյական պարտքն է համապատասխան քայլեր ձեռնարկել, որոնք կը բխին ՄԱԿ-ի որոշումներէն:

## ՖՈՒԹՊՈԼ ՀԱՅԱՍՏԱՆ 1-0 ԱՐԴԻԻՆՔՈՎ ՅԱՂԹԵՑ ԼԵՀԱՍՏԱՆԻՆ

Եւրոպական երկիրներու բաժակի՝ «Եւրո-2008» գտումի մրցաշարքէն ներս Հայաստանի հաւաքականը արձանագրեց յաջողական իր երկրորդ յաղթանակը:

Չորեքշաբթի, Յունիս 6-ին Երեւանի մէջ հիւրընկալելով Լեհաստանի ազգային խումբը, Հայաստանի մարզիկները 1-0 արդիւնքով հասան առաւելութեան:

Առաջին կիսախաղը ոչ-ոքի աւարտելէ ետք, 70-րդ վայրկեանին Համլէթ Մխիթարեան նշանակեց մրցումի միակ կողը:

Այս յաղթանակը կարելի է նկատել վերջին տարիներու Հայաստանի Ֆութպոլի մեծագոյն նուաճումը, նկատի առնելով Լեհաստանի հաւաքականը վաստակը:

Զտումի Ա. խմբակէն ներս հանդէս եկող Հայաստանի հաւաքականը Շաբաթ, Յունիս 2-ին արձանագրած էր իր առաջին յաղթանակը, մրցակիցի դաշտին վրայ 2-1 արդիւնքով պարտութեան մատնելով Ղազարխանին:

Յաւելեալ մանրամասնութիւններ տեսնել մարզական էջի վրայ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՐԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ԿԸ ԸՆՆԱՐԿԵ ԸՆԴԴԻՍԱԴԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԴԻՍՈՒՄՆԵՐԸ

Յունիս 2-ին Հայաստանի Սահմանադրական դատարանը սկսաւ քննարկել չորս ընդդիմադիր ուժերու ներկայացուցած դիմումները՝ Մայիսի 12-ի խորհրդարանական ընտրութիւններու ընթացքին տեղի ունեցած խախտումներու վերաբերեալ:

«Հանրապետութիւն» եւ «Նոր ժամանակներ» կուսակցութիւնները եւ «Իմպիւզմենտ» դաշինքը կը պահանջեն անվաւեր հոչակել համամասնական կարգով կատարուած ընտրութիւններու արդիւնքները: Մինչ, «Օրինաց երկիր»-ը կը պահանջէ վերահաշուարկ կատարել մօտ 200 ընտրական տեղամասերու մէջ:

«Եթէ արդիւնքում պարզուի, որ մեզանից ձայներ են գողացուել, մենք կը պահանջենք, որպէսզի «Օրինաց երկիր»-ին այդ ձայներին համապատասխան տեղեր յատկացուեն խորհրդարանում, այսինքն, վերադարձնեն գողացուածը», - «Ազատութիւն» ռատիոկայանին ըսած է «Օրինաց երկիր»-ի խորհրդարանական խմբակցութեան անդամ Յովհաննէս Մարգարեան:

Յունիս 4-ին տեղի ունեցած նիստին, դիմող կողմերու շուրջ 10 միջնորդութիւններէն Դատարանը բաւարարեց միայն անոնց, որոնք կը վերաբերէին այս կամ այն փաստաթուղթի պատճէնները տրամադրելուն:

«Իմպիւզմենտ» դաշինքի ներկայացուցիչ Նիկոլ Փաշինեան շարունակեց բացատրութիւններ տալ արձանագրուած ընտրախախտումներու վերաբերեալ:



Հայաստանի Սահմանադրական Դատարանը իր մէկ նիստի ընթացքին

ներու վերաբերեալ: Ան յայտնեց որ, բոլոր հիմքերը կան պնդելու, որ խորհրդարանական ընտրութիւնը «Բարգաւաճ Հայաստան»-ի եւ ՀՀԿ-ի մասնակցութեամբ «դադարել է Սահմանադրութեամբ եւ օրէնքով նախատեսուած գործընթաց լինելուց»:

Նա փորձեց հիմնաւորել, որ 2007-ի Ազգային ժողովի ընտրութիւններու ընթացքին խախտումները եղած են զանգուածային, կազմակերպուած եւ շարունակական, կիրառուած է գոյութիւն չունեցող ընտրողների մեխանիզմը, ընտրելու իրաւունքէն զրկուած են արտասահման ապրող ՀՀ քաղաքացիները:

Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Յարութիւնեան Նիկոլ Փաշինեանի խօսքը ընտրեց «իրաւագիտութեան հարթութիւնից դուրս» եւ մի քանի անգամ զրուշացուց. - «Սա հարցի իրաւական քննարկում է... Բայց դուք փորձում էք անձերի, մարդկանց տալ զնահատականներ, պիտակաւորել»:

Շաբ-ը էջ 4

## ՍԵԹԻ ՊՐԱՅՁԱ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ՈՐ ՅԱՌԱՋՆԹԱՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹ Ե ՀԱՅ-ԱՏՐՊԵՅԾԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

ԵԱՀԿ Մինսկի Խումբի ամերիկացի համանախագահ Մաթիւ Պրայզա յայտարարած է թէ, Հայաստան եւ Ատրպէյճանի հակառակադրական արձանագրած են Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման ուղղութեամբ:

Պրայզայի համաձայն, միջազգային միջնորդներու աւելի քան տասնամեայ ջանքերէն յետոյ Ատրպէյճանի եւ Հայաստանի նախագահները մօտ են հիմնական սկզբունքներու շուրջ համաձայնութեան ճանապարհին մնացած խոչընդոտներու յաղթահարման:

Ամերիկացի դիւանագէտը ըսած է, որ եթէ Յունիսի 9-ին Սանկտ Պետերբուրկի մէջ նախատեսուած հանդիպումը յաջողութեամբ պսակուի, «հիմնարար սկզբունքներու վերաբերեալ մնացած անհամաձայնութիւններու թիւը կը հասնի գրոյջի»:

«Ատոյիէյթըտ Փրես» գործակալութիւնը տեղեկացնելով այս

մասին կը յայտնէ, որ ամերիկացի համանախագահը չէ յստակացուցած այդ տարաձայնութիւնները, սակայն ընդգծած է որոշ հիմնարար սկզբունքներ, որոնց շուրջ արդէն համաձայնութիւն է ձեռք ձգուած:

Երկու կողմերը համաձայնութեան եկած են Լեռնային Ղարաբաղին յարող՝ հայկական ուժերու վերահսկողութեան տակ գտնուող շրջաններու վերադարձի հարցի շուրջ:

Միաժամանակ, Պրայզան չէ յստակացուցած՝ արդեօք համաձայնութիւն կա՞յ զաղթականներու վերադարձի կամ անոնց փոխհատուցում վճարելու վերաբերեալ:

«Դրուատանքի արժանի են Հայաստանի եւ Ատրպէյճանի դեկլարները, որոնք խիզախօրէն կը փորձեն կայունութիւն եւ բարգաւաճում բերել իրենց ժողովուրդներուն», - եզրակացուցած է Մեթիւ Պրայզա:

## ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ ԴԻՄԱԾ Է ԵՐՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ



«Ազատութիւն Արզումանեանին»

Հայաստանի նախկին արտաքին գործոց նախարար Ալեքսանդր Արզումանեան դիմած է Մարդու իրաւունքների Եւրոպական Դատարան, խախտուած նկատելով «Մարդու իրաւունքներու եւ հիմնարար ազատութիւնների պաշտպանութեան մասին» Ուխտի 5-րդ եւ 10-րդ յօդուածները:

Արզումանեան կը նկատէ որ, խախտուած է իր ազատութեան եւ անձեռնմխելիութեան իրաւունքը, ինչպէս նաեւ արտայայտուելու ազատութիւնը:

Շաբ-ը էջ 4

**ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ**

**ԼԱԻՍՏԵՍԱԿԱՆ ՌԵՊՈՐՏԱԺ՝  
ԼԱԻՍՏԵՍԱԿԱՆ ՎԱՂՈՐԴՄԱՆ ՎԱՍԱՐ**

Վերջին շրջանում յաճախ են հանդիպում այնպիսի թեմաներ, որոնք որոշակի դժուարություններ առաջ են կանգնեցնում՝ ժանրի ընտրություններն առումով: Իսկապէս՝ չեն կողմնորոշում, ի՞նչ ժանրով եւ ո՞՞րով գրես. լր՞ւրջ, թէ՞ հեզնական: Գրելուց յետոյ էլ գլխի չեն ընկնում՝ լուրջ եւ գրե՞լ, թէ՞ հեզնականով, որովհետեւ գլխի չեն ընկնում, թէ, ասենք, դիմացինդ, որի մասին գրելու ես, էդ իր արածը լուրջ է անո՞ւմ, թէ՞ հեզնական է:

Միանգամից խոստովանեմ, որ վերջին տարիներին ոչ մի անգամ ամենօրեայ եւ ամենշաբաթեայ «Հայլուր», այսինքն՝ «360 աստիճան» չեմ նայել: Իհարկէ, եղել են ինչ-որ դրուագներ, բայց սկզբից մինչեւ վերջ չեմ նայել:

Կիրակի օրը պատահաբար հանդիպեցի «360 աստիճանի» մեկ-նարկին ու որոշեցի դիտել, որովհետեւ հետաքրքիր էր, թէ ինչ են ասելու Սահմանադրական Դատարանում ընթացող պրոցէսի մասին: Միանգամից ասեմ, որ ոչ մի բան էլ չասացին ոչ միայն Սահմանադրական դատարանի, այլեւ քաղաքականութեան մասին:

Այդ հաղորդումը նայողը գլխի չէր ընկնի անգամ, որ երկրում ընտրութիւն է եղել, որ ընտրութիւններից յետոյ երկրում անդամ-թերքի ու բենզինի գները աճում են, որ երկիրը կառավարութեան կազմի ձեւաւորման պրոցէսի մէջ է, որ երկրում որոշում է ԱԺ պատգամաւորների անհատական ցանկը, որ երկրում բողոքարկում է ԱԺ ընտրութիւնների արդիւնքը, որ երկրի նախագահ կոչուածը մի քանի օրից հանդիպում է ունե-նայլու հակամարտող երկրի նախագահի հետ, որտեղ հնարաւոր է փաստաթուղթ ստորագրուի, որ ԵԱՀԿ Մինսկի խումբի համանախագահները ասում են, թէ Հայաստանը համաձայնել է ազատագրուած-գրաւեալ տարածքները ետ տալ, որ երկրում կալանքի տակ է երկրի նախկին ԱԳ նախարարը, եւ որ նրա մեղադրանքի հիմքում դրուած է այն, որ նա գումարներ է ստացել «ինչ-ինչ քաղաքական նպատակներ հետապնդող» Լեւոն Մարկոսից:

Իսկ ի՞նչ է կատարում այդ երկրում, կը հարցնէք դուք, ի՞նչ է պատմում «360 աստիճանը»: Ախր, դուք չէք պատկերացնում, թէ ինչ երկիր է Հայաստանի Հանրապետութիւնը: Մարերը՝ ոսկի, ծառերը՝ ոսկի, այստեղ ապրող մարդկանց ուղեղները նոյնպէս՝ ոսկի: Վերջին ձեւակերպումս չափազանցութիւն չէ, որովհետեւ հաղորդավարն ասաց, որ Հայաստանը նախ-թին հակադրում է ոսկէ միտքը: Իսկ եթէ աւելի մանրամասն՝ հիմա պատմեմ:

Ուրեմն՝ առաջին ռեպորտաժը այն մասին է, որ միջազգային ֆինանսական կազմակերպութիւնները սկսել են «շոյել կովկասեան վագրին»: Ուրեմն, ամբողջ աշխարհը գլուխ է ջարդում, ուզում է հասկանալ, թէ, այ մարդ, էս ի՞նչ ֆենոմեն է հայկական ֆենոմենը: Հիմա Սինգապուրը համարեա ոչ մէկին չի հետաքրքրում, հիմա աշխարհի միտքը կենտրոնացած է Հայաստանի վրայ:

Աշխարհը ուզում է հասկանալ, բայց չի կարողանում հասկանալ, եւ ուր որ է՝ աշխարհի դիողը

կը խփի: Բայց խնդիրն այն է, որ մեր գաղտնիքը հենց դիողների մէջ է:

Հեսա հայկական պատուիրակութիւնն ԱՄՆ-ում մասնակցելու է բարձր տեխնոլոգիայի մի ցուցահանդէսի, որտեղ ներկայացնելու է մի նոր սարք, որը անձեռոցիկի տուփի չափ է, բայց բոլորին լացացնելու է: Մօտաւորապէս՝ «Արմենիկում» բարձր տեխնոլոգիաների ոլորտում:

Ու խօսում է Վլադիմիր Մովսիսեանի բալեն ու բացատրում է, որ ամէն բջջային հեռախօսի միջի չիփային ձեւաւորումը թէ ինչը կատարում է Հայաստանում: Անգամ «Հայլուրի» լրագրողի դիողը այստեղ տաքանում է՝ ամէն հեռախօսի: Ասում է՝ հա: Լրագրողը տեղի չի տալիս՝ օրինակ՝ իմ այս հեռախօսի: Մովսիսեանի բալեն մի քիչ նահանջում է. ասում է՝ չիփային ձեւաւորման դետալները մէկը Հայաստանում է կատարում: Մա մօտաւորապէս էն անեկոտուն է՝ ապէ, «Ֆանտա» խմէ՞լ ես: Ես չեմ խմել, բայց հորոխպորս տղու ընգերը մէկին խմելիս տեսել է:

Իսկ մինչ այդ կովկասեան վագրը թռչում է ու թռչում:

Ուրեմն միջազգային ֆինանսական կառուցներից մէկի ներկայացուցիչը եկել է ու յայտարարել, որ Հայաստանը տնտեսական աճի ցուցանիշներով առաջինն է Հարաւային Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում: Սա հաղորդավար բալեն բարձր է ասում, իսկ աւելի ցածր եւ արհամարհական տոնով շարտում է, թէ էս մրցակցութեան մէջ նախ ունեցող երկրները չեն հաշուառւում:

Իհարկէ, նա չի ասում, որ իր գծագրած տարածաշրջանում նախ-ու գազ չունեցող երկրների թիւը մեծ չէ՝ երեւի թէ չորս. Հայաստան, Վրաստան, Ղրղզստան, Տաշիկստան:

Ահա այսպիսի թուիչքներ՝ երազում եւ արթմնի: Բայց մեր թուիչքը միայն ոսկէ ուղեղից չէ, այլեւ կառուցելու անհագուրդ ծարաւից: Ու էստեղ մտնում է Քրք Քրքորեանը ապիտակ կասուած-շլուարով, որին Ռոբերդ Քոչարեանը բերեց Հայաստան եւ օգնեց, որ Քրքքի ամերիկեան երազանքը փոխարինուի հայկական երազանքով: Դե, էլ մանրամասն չպատմեմ, թէ ինչպէս են կառուցում ճանապարհները. կաղրում սպիտակ սաղաւարտով պաշտօնեաներ են՝ շինհրապարակից շինհրապարակի գնալիս:

Յունիսի 1-ը, ասում է հաղորդավարը, Երեխաների պաշտպանութեան միջազգային օրը, Նոր տարուայ նման տօն է դառել Հայաստանում: Էստեղ երեխաները երջանիկ են, ուրախ, ազատ. դաստիարակութեան նորագոյն մեթոդներ են կիրառւում:

Տաւուշի մարզի Տաւուշ գիւղում ակտիվօրէն քննարկում է արօտավայրերի խնդիրը, ինչ-ինչ հարցեր կան, բայց, իհարկէ, լուծելի հարցեր են: Խօսում են Տաւուշի բնակիչները, գիւղապետը՝ սեփական կաբինետից, որը համարեա նախարարական կաբինետ է: Կարճ ասած, լաւատեսական ռեպորտաժ է լաւատեսական հաղորդման համար: Ահա այսպիսի «360 աստիճան». համաձայնէ՞ք՝ դիպուկ անուանում է:

Ա.Կ.

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

**ՎԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՈՒԶՈՒՄ Է  
ՎԵՐՋԱՊԵՍ ՏԵՍԵԼ  
ԸՆԴԴԻՍՈՒԹԵԱՆ ԴԵՍՔ**

Շատերն են յիշում, թէ ինչ եղաւ այն բանից յետոյ, երբ Սահմանադրական դատարանը քննելով 2003 թուականի նախագահի ընտրութեան վիճարկման մասին ընդդիմութեան դիմումը, կայացրեց վստահութեան հանրաքուէի մասին պատմական որոշումը: Դա նոյնիսկ որոշում էլ չէր, այլ առաջարկ, բայց բաւական թանկ նստեց ժողովրդի վրայ: Նրանք, ովքեր մոռացել են, յիշեցնեմ, որ Սահմանադրական դատարանը իբրեւ թէ (Սահմանադրութեամբ Հայաստանի իշխանութեան տէրը համարուող ժողովուրդը կ'ասէր՝ իրաւաբէին) գտել էր գժտուած ընդդիմութեանն ու իշխանութեանը հաշտեցնելու տարբերակը եւ առաջարկել էր նախագահի ընտրութիւնից մէկ տարի անց անցկացնել վստահութեան հանրաքուէ:

Այլ կերպ ասած, Սահմանադրական դատարանը իշխանութեանը եւս մէկ անգամ մղել էր կեղծիքի, իսկ ընդդիմութեանն էլ՝ դատապարտել հերթական պարտութեան: Իշխանութիւնը բնականաբար չգնաց կեղծիքի, որովհետեւ ընտրակեղծիքի մեքենան 2003 թուականին բաւականին շատ էր գործածուել՝ ամբողջ երկու անգամ, եւ մէկ տարի անց այն ուղղակի ֆիզիկապէս չէր կարող գործի դրուել:

Իսկ ահա ընդդիմութիւնը կուլ տուեց ՄԴ իսպծը եւ մէկ տարի անց դրա հիման վրայ սկսեց զանգուածային միջոցառումներ:

Դրանք սկսուեցին Ապրիլի 9-ին՝ այն ժամանակուայ ընդդիմադիր առաջատար եռեակի՝ Գեղամեան-Դեմիրճեան-Արամ Զ. Սարգսեան համատեղ հանրահաւաքով, եւ ասարտուեցին Ապրիլի 12-ի լոյս 13-ի գիշերը, երբ տեղի ունեցաւ վստահութեան գիշերային հանրաքուէ, եւ բոլորը վստահ եղան, որ իշխանութիւնը մէկ տարի առաջ չէր կեղծել ընտրութիւնն այն բանի համար, որ մէկ տարի յետոյ ինքն իր ձեռքով կեղծիքը ջուրը լցնէր: Ստացուեց, որ Սահմանադրական դատարանի առաջարկը չկատարուեց, իշխանութիւնը մնաց, իսկ ընդդիմութիւնը 2004-ի Ապրիլին կրեց թերեւս աւելի ծանր ու ճակատագրական պարտութիւն, քան 2003-ի համապետական ընտրութիւնների ընթացքում:

Այդ նախապատմութիւնը գուցէ աւելի երկար լինի, քան բուն պատմութիւնը, ինչի մասին պէտք է շարադրեմ: Բուն պատմութիւնն այն է, որ Մայիսի 12-ի խորհրդարանի ընտրութիւնից յետոյ ընդդիմադիր մի քանի ուժեր դիմում-բողոք են ներկայացրել Սահմանադրական Դատարան, որն էլ պէտք է որոշի՝ թէ այդ բողոքները որքանով են հիմնաւոր, եւ թէ որքանով են ազդել ընտրութեան ելքի վրայ: Այլ կերպ ասած, թէ Մայիսի 12-ի ընտրութիւնը որքան է համապատասխանում Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեանը: Այդքանը: Բայց որպէս պատմութիւն, կարճ էր նաեւ այն նախապատմութիւնը, որ այս պատմութեան համար շարադրեցի վերեւում: Այսինքն, 2003 թուականին էլ պատմութիւնն ընդամէնն այն էր, որ ՄԴ-ն քննում էր ընդդիմութեան բողոքը, այսինքն, որոշելու էր, թէ 2003 թուականի նախագահի ընտրութիւնը որքան էր համապատասխանում Հայաստանի Սահմանադրութեանը: Պատմութիւնը երկա-

րում է, երբ դառնում է նախապատմութիւն:

Թէ ինչքան կ'երկարի ներկայիս պատմութիւնը, կախուած է նրանից, թէ կը դառնայ այն արդեօք նախապատմութիւն, եւ ինչի նախապատմութիւն կը դառնայ: Իսկ դա էլ կախուած է նրանից, թէ ինչ որոշում կը կայացնի Սահմանադրական Դատարանը: Իսկ որոշման տարբերակները շատ չեն՝ կամ ընտրութիւնը եղել է օրէնքով, կամ անօրէն, կամ եղել են առանձին անօրինութիւններ, որոնք չեն ազդել ընտրութեան ելքի վրայ: Երեքից մէկը պէտք է ընտրի Սահմանադրական Դատարանը: Իսկ ընդդիմութիւնն էլ պէտք է որոշի, թէ ինչ է անելու Սահմանադրական Դատարանի ընտրութիւնից յետոյ: Իշխանութեան ընտրութիւնից յետոյ պարզ է, որ դիմում եւ Սահմանադրական Դատարան: Իսկ թէ ուր եւ դիմելու, ուր եւ գնալու Սահմանադրական Դատարանի ընտրութիւնից յետոյ, թերեւս շատ կարեւոր ու հական հարց է: Ընդ որում, հասարակութիւնը ոչ այնքան սպասում է, թէ ինչ է ասելու ՄԴ-ն, որքան սպասում է, թէ ինչ է դրանից յետոյ ասելու եւ անելու ընդդիմութիւնը: Եթէ դրա իմաստը Սահմանադրական Դատարանի կախուածութիւնը, իշխանութեան ուզուողատոր եւ կեղծարար դէմքը մէկ անգամ եւս ցոյց տայն է, ապա հասարակութիւնն այդ դէմքը այնքան է տեսել, որ մէկ անգամ եւս նայելու ցանկութիւն այլեւս չու-նի: Ընդդիմութիւնը պէտք է դադարի հասարակութեանը ցոյց տալ իշխանութեան դէմքը, հասարակութիւնն ուզում է վերջապէս տեսնել ընդդիմութեան դէմքը, տեսնել, թէ այդ դէմքն ինչով է տարբերում իշխանութեան դէմքից:

**ՅԱԿՈՒ ԲԱԴԱԼԵԱՆ  
«ԼՐԱԳԻՐ»**

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
ԽՍԲԱԳԻՐ՝  
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ՊԱՍՏԵԱՆ  
ԽՍԲԱԳՐԱՎԱՆ ԿԱԶՄ՝  
ՍԱԳԱԿ ԹՈՒԹԵԱՆ  
ՎԱԶԳԵՆ ԽՈՍԱՆԵԱՆ  
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ  
Ֆեռ. (626) 797-7680  
Ֆաքս. (626) 797- 6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social  
Democratic Hunchakian Party of  
Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second  
Class), \$75.00 (Air Mail)  
Overseas \$85.00 (2nd Class Mail),  
\$125.00 (Air Mail).  
All payments must be made in  
US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104

ԼՈՒՐԵՐ

ԸՆՏՐԱԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՄԵՂԱԴՐԱՆՔՈՎ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՌՋԵԻ ԿԸ ԿԱՆԳՆԵՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ 10 ԱՆԴԱՄՆԵՐ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Մայիսի 12-ի խորհրդարանական ընտրությունների ընթացքում արձանագրուած խախտումների վերաբերեալ դատարան է ուղարկուել 5 քրէական գործ՝ 14 անձի վերաբերեալ, որոնցից 10-ը տեղամասային ընտրական յանձնաժողովի անդամներ են եւ մեղադրուած են քուէարկութեան արդիւնքները կեղծելու մէջ: Այս մասին ասուած է Հայաստանի Գլխաւոր Դատախազութեան պաշտօնական կայքէջում տեղադրուած հաղորդագրութիւնում:

Արագածոտնի մարզի դատախազութիւնը մարզի առաջին տուեանի դատարան է ուղարկել թիւ 14 ընտրատարածքի 55-րդ տեղամասի ընտրական յանձնաժողովի նախագահ Զիվան Սարգսեանի կողմից համամասնական ընտրակարգով ընտրութիւնների քուէարկութեան արդիւնքները կեղծելու դէպքի առթիւ յարուցուած քրէական գործը:

Համաձայն գլխաւոր դատախազութեան հաղորդագրութեան, նախաքննութեամբ պարզուել եւ հիմնաւորուել է, որ ընտրութիւնների աւարտից յետոյ թիւ 14 ընտրատարածքի՝ Արագածոտնի մարզի Վարդենիս գիւղում գտնուող 55-րդ տեղամասի ընտրական յանձնաժողովի նախագահը, համամասնական ընտրակարգով ընտրութիւնների ձայները հաշուելիս, «անձնական շահագրգռուածութիւնից ելնելով, Ազգային ժողովրդավարական», «Ազգային միաբանութիւն»,

«Ժողովրդավարական ուղի», Հայաստանի դեմոկրատական, Հայաստանի ժողովրդական, Հայաստանի կոմունիստական կուսակցութիւնների օգտին օրինական քուէարկած համապատասխանաբար՝ 3, 6, 2, 1, 2, 2 ձայները գրոյացրել է, 1 ձայն «Դաշինք» կուսակցութեան եւ 17 ձայն «Միաւորուած աշխատանքային» կուսակցութեան ձայներից պակաս է հաշուել, իսկ «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն», Հայաստանի Հանրապետական, «Հանրապետութիւն» կուսակցութիւնների օգտին աւելի է հաշուել համապատասխանաբար 15, 20 եւ 1 ձայն, ինչն առաջացրել է նշուած երեք կուսակցութիւններին կողմ քուէարկած ձայների՝ իրականութեանը չհամապատասխանող աւելացում: Այնուհետեւ, համամասնական ընտրակարգով ընտրութիւնների քուէարկութեան վերջնական արդիւնքներն ամփոփելիս, դիտաւորութեամբ ձայներն ակնյայտ սխալ է հաշուել՝ օգտուելով այն հանգամանքից, որ յանձնաժողովի անդամները եղել են յոգնած եւ իրեն վստահել են»:

Ըստ հաղորդագրութեան, նախաքննութեան ընթացքում Զիվան Սարգսեանը խոստովանել է կատարած արարքը եւ նշել, որ ամփոփիչ արձանագրութիւնը կազմելիս կեղծ թուեր է թելադրել:

Սարգսեանին մեղադրանք է առաջադրուել քրէական օրէնսգրքի 150-րդ յօդուածի յատկանիշներով՝ քուէարկութեան արդիւնքները կեղծելու համար:

ՀԱՆՐԱՅԱԲԱՔՆԵՐԸ ԲԱՅԱՐՁԱԿ ԱՆՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆ ԵՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Երեւանի պաշտպանութեան միջազգային օրը ընդդիմադիր ծնողների երեխաներն անցկացրին Մատենադարանին յարակից հրապարակում՝ «Իմպիւլսներ», ՆԺԿ-ի եւ «Հանրապետութեան» կազմակերպած հանրահաւաքում: Յունիս 1-ին հաւանաբար նաեւ տօնի հետ կապուած հանրահաւաքի մասնակիցների թիւը զգալիօրէն պակաս էր նախորդից. «50 հոգի էլ գայ, 100 հոգի էլ՝ միեւնոյնն է անելու ենք հանրահաւաքներ, որովհետեւ դա բացարձակ անհրաժեշտութիւն է», - յայտարարեց Արամ Զաւէնի Սարգսեանը:

«Իմպիւլսներ» դաշինքի ներկայացուցիչ Երեւանի նախկին քաղաքապետ Վահագն Սաչատրեանն էլ այս թեմայով աւելացրեց, որ յաճախ հարցնում են՝ ե՞րբ է այս ամէնը վերջանալու. «Կը վերջանայ այն ժամանակ, երբ վստահ լինենք, որ իշխանութիւնը Հայաստանում ձեւաւորում է ժողովուրդը»:

Նա անդրադառնալով քուէարկութեան օրը տեղի ունեցած կեղծիքներին, հանրահաւաքի մասնակիցներին ներկայացրեց ընդամէնը մի քանի փաստ, որոնք հիմք են ընտրութիւններն անվաւեր ճանաչելու համար: Մասնաւորապէս, նրա ձեռքում մի ամբողջ տրցակ պատուած վաւեր քուէարկութիւններ էին, ցեխոտուած ու կեղտոտ դրանք պատկանում էին Արտաշատի թիւ 17 ընտրատարածքին, որտեղ քուէարկուած էր Գրիշա Վիրաբեանը, եւ պատուած քուէ-

արկութիւնները Վիրաբեանի օգտին էին քուէարկուած:

«Սրանցով Վիրաբեան Գրիշան իրաւունք ունի գնա եւ ստանայ պատգամաւորի մանդատը», - ասաց Վահագն Սաչատրեանը եւ ցատկով նկատեց, որ այդ կեղծիքները հիմնականում անուծ են ուսուցիչները, ովքեր սերունդ են դաստիարակում. «Այդ կեղտն է դժուար լինելու մաքրել, թէ չէ իշխանութիւններին փոխելը շատ դժուար է», - ասաց Սաչատրեանը:

ՆԺԿ նախագահ Արամ Կարապետեանն էլ Սերժ Սարգսեանին եւ Քոչարեանին խորհուրդ տուեց չհանգստանալ ու սպասել, որ ժողովուրդը ակտիվանալու է, որովհետեւ որպէս կանոն «նախագահական ընտրութիւնների ժամանակ է աճում հանրահաւաքների մասսան»:

Իսկ Արամ Սարգսեանն իր խօսքում հասարակութեանը տեղեկացրեց, որ իշխանափոխութեան խնդիրը հնարաւոր է լուծել ընդդիմադիր հիմնական ուժերի կոնսոլիդացիայի շնորհիւ, ընդ որում այնպիսի թեկնածուի շուրջ, որը կը լուծի ոչ միայն իշխանափոխութեան խնդիրը, այլեւ գաղափարական ալլընտրանք կը լինի: Բայց այսօր Արամ Սարգսեանն անուններ չտուեց, թէ եւ գործընթացն այսօր էլ ընթանում է:

Հանրահաւաքի մասնակիցները ծափողոյններով դիմաւորեցին Նիկոլ Փաշինեանին, որի ծննդեան օրն էր: Իսկ նա ամբողջ օրն անցկացրել է ՍԴ-ում, երեկոն էլ հանրահաւաքում:

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ ԱԿԱԴԵՄԻԿՆԵՐԻՆ ԽՆԴՐԵԼ Է ԱՂՍՈՒԿ ԶԲԱՐՁՐԱՑՆԵԼ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: 2001թ-ին Քի վեստում նախատեսուած ՀՀ եւ Ատրպէյճանի նախագահների հանդիպումից առաջ ԼՂ հիմնախնդրի գործընթացով մտահոգուած մի քանի մտաւորականներ հանդիպել են Ռոբերտ Քոչարեանին: «Այդ հանդիպումից մի շաբաթ յետոյ զանգահարեցին ինձ եւ Ռաֆայէլ Ղազարեանին եւ ասացին, որ Պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանը ցանկանում է հանդիպել մեզ հետ», -

«Ա1+»ին տեղեկացրեց ակադեմիկոս Լենասէր Աղալովեանը:

Նրա ասելով՝ խօսակցութիւնը սկսուել է բանակից. «Նա ասաց՝ մենք փոքր հանրապետութիւն ենք, չենք կարող բանակը պահել: Բանակը պահելու համար մեզ առնուազն 5 միլիարդ է պէտք: Խօսակցութիւնը հանգեց Լաչինի միջանցքին: Սերժ Սարգսեանն ասաց, որ իրենք կ'աշխատեն, որ Լաչինի միջանցքը մնայ: Խօսքը գնում էր 20-25 կմ տարածքի մասին, իսկ մնացած տարածքները պէտք է վերադարձուեն: Սերժ Սարգսեանը մեզ խնդրեց տարածքները յանձնելու դէպքում աղմուկ չբարձրացնել»:

Լենասէր Աղալովեանն ու Ռաֆայէլ Ղազարեանը Սերժ Սարգսեանին խոստացել են տարածքներ յանձնելու դէպքում հնարաւորինս մեծ աղմուկ բարձրացնել:

Ըստ Լենասէր Աղալովեանի՝ իրենց պատասխանին հետեւել է Սերժ Սարգսեանի հետեւեալ հարցը. «Ի՞նչ է՝ ձեր ուզածը այն չէ՞ր, որ ԼՂՀ-ն Հայաստանին միանար միջանցքով: Այդ միտքը Սերժ Սարգսեանը վերջերս կրկնեց նաեւ



Ակադեմիկոս Լենասէր Աղալովեան

ԵՊՀ ուսանողների հետ հանդիպման ընթացքում: Այսինքն՝ ոչինչ չի փոխուել»: Ակադեմիկոսի կարծիքով ԼՂ հիմնախնդրի հարցում մեր իշխանութիւնների ամենամեծ խնդիրն այն է, որ մինչ օրս չեն բնակեցուել ազատագրուած տարածքները:

«Իսկ Շահումեանը հայաթափուելու յաջորդ օրն իսկ ատրպէյճանցիները բնակեցրեցին: Զինադադարից 13 տարի է անցել, սակայն մեր իշխանութիւնները դեռ չգիտեն, տարածքները բնակեցնում է, թէ ոչ: Այսօր չստակ է, որ պատրաստուած են տարածքները վերադարձնել: Այս իշխանութիւնների օրօք ԼՂ հիմնախնդրի կարգաւորման գործընթացում որեւէ դրական տեղաշարժ չի արձանագրուել», - ասաց ակադեմիկոսը:

ԿԸ ԼԻՆԻ ՈՉ ԹԵ ԿՈՍԿՅԻԱ, ԱՅԼ ՀԱՏՈՒԱԾԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Այսօր հաւանաբար վերջնական, ընդգրկուն տեսքով, վերլուծութիւններով որոշում կը կայացնեն քաղաքական ուժերը», - Յունիս 5-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ «Փաստարկ» ակումբում տեղեկացրեց ՀՀԿ խորհրդի անդամ Գալուստ Սահակեանը: Նա նկատեց, որ հնարաւոր է ձեւաւորուի ոչ թէ կոալիցիա, այլ իրականացուի հատուածական համագործակցութիւն այն ուժերի հետ, որոնց նախընտրական ծրագրերի համատեղելիութիւն հնարաւոր է: Ընդ որում հատուածական համագործակցութիւնը վերաբերում է առաւելապէս ՀՅԴ-ին:

Ընդդիմութեան հետ էլ համագործակցութիւն կը լինի, բայց խորհրդարանում՝ տարբեր հարցերի շուրջ: Պարզուած է, առաւելագոյն քուէներ ստացած Հանրապետական կուսակցութիւնը ցանկանում է ստեղծել բարի միջնորդ: Հարցին, թէ այդ դէպքում հնարաւոր է, որ ՀՅԴ-ի խոստումը՝ 5 անգամ թոշակները եւ նուազագոյն աշխատավարձի չափը բարձրացնելու վեաբերեալ իրականացուի, Գալուստ Սահակեանը պատասխանեց, որ երկնքից մասնաւոր չեն իջեցնելու, բայց այդ հարցերը պետական քաղաքականութեան օրակարգի խնդիր են, եւ անպայման բարձրացուելու են, սակայն չափի մասին Սահակեանը ոչինչ չասաց:

«Ա1+»-ի հարցին, թէ արդեօք կոալիցիայի ձեւաւորման բանակցութիւնների հիմքում 2008 թուա-



ՀՀԿ խորհրդի անդամ Գալուստ Սահակեան

կանին Սերժ Սարգսեանին պաշտպանելու պայմանը չի, Գալուստ Սահակեանը նկատեց, որ եթէ ձեւաւորուած է կոալիցիա եւ պէտք է 5 տարի միասին աշխատեն, ապա տրամաբանական է, որ պաշտպանեն Սարգսեանին, ոչ թէ ամէն մէկը հանդէս գալ իր թեկնածուով: Ինչ վերաբերում է հատուածական համագործակցութեան բնոյթին, ապա դա կարող է լինել մի քանի պորտֆել, բայց ինչը չի ենթադրի պատասխանատուութիւն ամբողջ ծաւալով:

Գալուստ Սահակեանը քննադատեց ընդդիմութեանը, որը ՍԴ-ում այսօր վիճարկում է ընտրութիւնների օրինականութեան հարցը: «Ընդդիմութիւնը ծիծաղելի դարձաւ», - ասաց նա ու աւելացրեց, որ «այդքան ուժ համախմբուել են՝ 1 փաստ չեն կարողանում ներկայացնել, ժողովուրդը փողոցում աւելի շատ փաստեր կարող է ներկայացնել»:

ԼՈՒՐԵՐ

«ԼՂՀ ՂԵԿԻՆ ԿԱՐՈՂ Է ՅԱՅՏՆՈՒԵԼ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԹՄՐԱՍՈԼԸ ԵՒ ՈՉ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ԿԳԲ-ԱԿԱՆԸ»

ԵՐԵՎԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Ղա-րաբարդի պետության ղեկին կարող է յայտնուել պրոֆեսիոնալ թմրա-մոլը, ոչ պրոֆեսիոնալ ԿԳԲ-ակա-նը: Եւ այդ ամբողջը պարտադր-ւում է այդ ժողովրդին, առանց հարցնելու ոչ մի բան եւ ոչ մէկին: Ինչո՞ւ չէք խօսում այդ մասին, ընկերներ», - Յունիս 4-ին «Ար-ցախեան բանակցային գործընթա-ցի հնարաւոր զարգացումները» թեմայով «Ալեանս» կազմակեր-պութեան քննարկման ընթացքում յայտարարեց քաղաքագէտ Իգոր Մուրադեանը:



Քաղաքագէտ Իգոր Մուրադեան

Նրա կարծիքով անհրաժեշտ է քննարկել ԼՂՀ նախագահի ընտ-րութիւններն ու դրանց հետեւան-քերը եւ յետոյ անցնել տարած քնե-րի խնդրին: Ըստ նրա՝ այժմ այնպիսի մի իրավիճակ է, որ նոյնիսկ Հայաստանի իշխանութեա-նը հնարաւոր չէ մեղադրել տա-րած քները վերադարձնելու մէջ: Նա չի կիսում այն տեսակէտը, թէ ամէն ինչ լուծուում է Հայաստա-նում. «Այդ դէպքում ինչո՞ւ եւնք խօսում Ղարաբարդի նախագահ, խորհրդարան, ի վերջոյ պետակա-նութիւն ունենալու մասին: Եթէ ամէն ինչ լուծուում է Հայաստանում, ապա պէտք է դէն նետել այդ ամէնը: Ամէն ինչ պէտք է սկսել հենց Ղարաբարդում»: Նրա կարծիքով հենց նման մտնեցումն է պատճառը, որ Ղարաբարդի իշխանութիւնը միշտ եղել է մի կողմ քաշուած:

որ գտնուել արտաքին աշխարհի հետ շփման քաղաքական ռեսուրս: Ահա ամբողջը: Այդ ռեսուրսը բա-ցարձակապէս բացակայում է»:

Իր ասածն հիմնաւորելու հա-մար պարոն Մուրադեանը մի դրուագ պատմեց. «Ահա փոքր մի դրուագ, դե ոչ այնքան փոքր, որ կապուած է Հայաստանի խորհր-դարանի վերջին ընտրութեան հետ, երբ արեւմտեան հանրութիւնը ընդ-հանուր առմամբ ոչ էլ արձագան-քեց: Չարձագանքեց իհարկէ չա-կերտաւոր: Արձագանք եղաւ եւ բաւական յստակ՝ ժամանակ տուե-ցին: Ժամանակ տուեցին, որ լինեն արմատական յայտարարութիւններ: Այդ յայտարարութիւններ, սկզբուն-քորէն չեն կարող լինել: Որովհե-տեւ բազմավեկտոր խաղ կարող է խաղալ սկզբունքային սուբիեկտը, որը դիտէ, թէ ինչ է ինքն ուզում: Որը բացի իշխանութիւն պա-հելու խնդրից, ունի նաեւ այլ խնդիրներ: Այդպիսի սուբիեկտ չկայ ոչ հասարակութեան, ոչ քա-ղաքական դասի, ոչ էլ քաղաքական ղեկավարութեան մէջ»:

Իր ելույթից անմիջապէս յե-տոյ Իգոր Մուրադեանը հեռացաւ՝ ներկաներին զրկելով հարցեր տա-լու հնարաւորութիւնից:

Իգոր Մուրադեանին կարծի-քով՝ այս իրավիճակը օգտագործ-ւում է թէ Հայաստանի եւ թէ Ղարաբարդի իշխանութիւնների կող-մից. «Ղարաբարդի ղեկավարութիւնն ամէն ինչ բարդում է Հայաստանի վրայ, իսկ Հայաստանի ղեկավարու-թիւնն էլ ասում, թէ իբրեւ կայ արտաքին ճնշում: Իրականում որե-ւէ ճնշում չկայ եւ որեւէ մէկը չի կարող ապացուցել, որ ճնշում կայ: Հայաստանում եւ Ղարաբարդում պար-զապէս չկայ մի ուժ, որը կարողանայ յարաբերուել արտաքին աշխարհի հետ:

Խօսքը գնում է այն մասին,

ԻՇԽԱՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՆ ԶԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ

Յունիս 6-ին, Հայաստանի Հանրապետական կուսակցութիւնը՝ ի դէմս ՀՀԿ Խորհրդի նախագահ, վարչապետ Սերժ Սարգսեանի եւ «Բարգաւաճ Հայաստան» կուսակ-ցութիւնը՝ ի դէմս կուսակցութեան նախագահ Գագիկ Ծառուկեանի, ելին Վաչիսի 12-ին կայացած ընտրութիւնների արդիւնքից, Ռոբերտ Գոչարեանի աջակ-ցութեամբ ստորագրել են համա-ձայնագիր՝ քաղաքական կոալիցիա ստեղծելու վերաբերեալ:

գումարման ժամանակահատ-ւածում ձեւաւորել հասարակութեան առաւել մեծ վստահութիւնը վաչելող, արդիւնաւէտ գործող օրէնսդիր եւ գործադիր իշխա-նութիւն, ապահովել նախընթաց տարիների ձեռքբերումների կայուն, շարունակական զարգացումը:

Ստորագրուած փաստա-թղթերն ուղղուած են նաեւ Հանրապետական եւ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնների նախընտրական ծրագրերի համա-դրմամբ կառավարութեան գոր-ծունէութեան միասնական ծրագրի մշակմանը, կառավարութեան գործունէութեան ծրագրի եւ ՀՅԴ-ի նախընտրական ծրագրի մեծապէս համընկնող նպատակների իրակա-նացմանը, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետութեան առջեւ ծառա-ցած մարտահրաւէրների արդիւ-նաւէտ դիմակայմանը:

Քաղաքական կոալիցիան իր հերթին Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հետ՝ ի դէմս ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմնի ներկայացուցիչ Արմէն Ռուստամ-եանի ստորագրել է համագործակ-ցութեան համաձայնագիր:

Քաղաքական կոալիցիայի ստեղծման հիմնական նպատակն է Ազգային ժողովի չորրորդ

ԵԱՅԿ-Ի ԳՈՐԾՈՂ ՆԱԽԱԳԱՅԸ ԱՒԱՐՏԵՑ ԶԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԶԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ



Տեսարան մը ԵԱՀԿ նախագահ Մորատինոսի եւ Լեոնային Ղարաբարդի նախագահ Արկադի Դուկասեանի միջեւ կայացած հանդիպումէն

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Տարածաշրջանային այցով Երեւա-նում գտնուող ԵԱՀԿ-ի գործող նա-խագահ, Իսպանիայի արտգործնա-խարար Միգել Անխել Մորատինոսը Երեքշաբթի, Յունիս 5-ին աւարտեց հայաստանեան հանդիպումները:

գործող նախագահի գլխաւորած պատուիրակութեանն ընդունել են Ռոբերտ Գոչարեանը, վարչապետ Սերժ Սարգսեանը:

Արտգործնախարար Վարդան Օսկանեանի հետ բանակցութիւննե-րից ու համատեղ մամուլի ասուլի-սից յետոյ Մորատինոսը կարճատեւ հանդիպում ունեցաւ Լեոնային Ղա-րաբարդի նախագահ Արկադի Դու-կասեանի հետ:

Ռոբերտ Գոչարեանը հանդիպ-ման ժամանակ ասել է, որ ԵԱՀԿ շրջանակում ընթացող «ղարաբաղ-եան հակամարտութեան կարգաւոր-ման բանակցային գործընթացին այլընտրանք եւ աւելի արդիւնաւէտ ձեւաչափ հայկական կողմը չի տես-նում»:

Հանդիպումից յետոյ Դուկաս-եանը լրագրողներին ասաց, որ լի-ովին համամիտ է Հայաստանի արտգործնախարարի հետ, ով Մո-րատինոսի հետ բանակցութիւնների ժամանակ ասել էր, որ հիմնական հարցը Լեոնային Ղարաբարդի կար-գավիճակի հարցն է. - «Եւ եթէ մենք այս հարցի շուրջ համաձայնութեան չզանք, ես չեմ պատկերացնում, թէ ինչ լուսատեսութեան մասին կարող է խօսք լինել»:

«Զրուցակիցները հանգամա-նօրէն քննարկել են զարաբաղեան խնդրի կարգաւորման գործընթացի վերջին զարգացումները: Իսպան-իայի արտգործնախարարը ներկա-յացրել է նախօրէին Ատրպէյճանում կայացած հանդիպումների տպաւո-րութիւնները եւ վերահաստատել է կազմակերպութեան պատրաստակա-մութիւնը՝ աջակցելու ինդրի խա-ղաղ կարգաւորմանը», - ասուած է նախագահի մամուլի գրասենեակի տարածած հաղորդագրութիւնում:

Ի տարբերութիւն ԵԱՀԿ-ի գոր-ծող նախագահի, Դուկասեանը մեծ յոյսեր չի կապում Քոչարեան - Ալիեւ սանկուպետերբուրկեան հան-դիպման հետ. - «Զենք գտնում, որ այդ հանդիպումը կարող է ճակա-տագրական նշանակութիւն ունե-նալ: Իմ կարծիքով, սովորական հանդիպում է լինելու»:

Անդրադարձ է եղել նաեւ Հա-յաստանում իրականացուող ժո-ղովրդավարական բարեփոխումնե-րին, հայ-իսպանական յարաբերու-թիւններին:

Օրուայ ընթացքում ԵԱՀԿ-ի

Միգել Անխել Մորատինոսի եւ ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժո-ղովին նախագահ Գորան Լենմարկե-րի հետ հանդիպում է ունեցել նաեւ «Ժառանգութիւն» կուսակցութեան նախագահ Բաֆֆի Յովհաննիսեանը:

ՍԱՅՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Շաբու մականուած էջ 1-էն

րութիւններու արդիւնքներուն վրայ:

ԿԼՅ-ի նախագահ Գարեգին Ազարեանը 1,5 ժամուայ ընթաց-քին պատասխանեց հնչած բոլոր հարցադրումներին եւ ընտրախախ-տումներու վերաբերեալ մեղադ-րանքներուն: Անոր կարծիքով 14665 անձըրութիւնները չեն ազդած ընտ-

Գ. Ազարեան հերքեց խախ-տումներուն առնչուող բոլոր յայ-տարարութիւնները՝ վերջաւորու-թեան միայն յիշելով որոշ թերու-թիւններ, որոնք, ըստ իրեն, «չէին կարող հակառակ ազդեցութիւն ունե-նալ արդիւնքների վրայ»:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

Շաբու մականուած էջ 1-էն

տակագմի անձնակազմի մէկ պաշ-տօնեան, որ յայտնած է թէ, յառա-ջիկայ օրերուն վարչապետը կրնայ ընդունել Ալեքսանդր Արզուման-եանի կնոջ՝ Մելիսա Պրատունին:

տութիւնը: Փողերու լուացման մեղադ-րանքով, ամիսէ մը ի վեր կալանքի տակ գտնուող Արզումանեանի պաշտպանութեան կոմիտէն Յու-նիս 5-ին բողոքի ցոյց կազմա-կերպած էր Կառավարութեան շէն-քի մօտ՝ պահանջելով հանդիպում վարչապետ Սերժ Սարգսեանի հետ: Յուցարարներու մօտ դուրս եկած է կառավարութեան աշխա-

կոմիտէի անդամներէն Ազ-գային ժողովի նախկին փոխխօս-նակ Կարապետ Ռուբինեան, «Ազա-տութիւն» ռատիոկայան յայտնած է, որ Արզումանեան քաղաքական բանտարկեալ է, քանի որ կալանա-ւորուած է իր քաղաքական գոր-ծունէութեան համար:

ՄԱՍԻՍ  
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ  
ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ԱԶԳԱՅԻՆ

ՉԱԽՈՂՈՒԱԾ ՆԱԽԱԳԻԾ, ԿԱՍ ԱՄԵՆ ԻՆՉ ԴԵՌ ԿՈՐԱԾ ՉԷ

ՏԻԳՐԱՆ ՊԱՄԿԵԻԻԶԵԱՆ ՀԵՏՔՕՆԼԻՆԵ

Մայիսի 12-ին տեղի ունեցած միջոցառումը (Աժ ընտրութիւններ) շատերին է գցել յուսահատութեան մէջ, շատերն են խօսում երկրի քաղաքական համակարգի անուղղելի դեֆորմացիայի մասին՝ դրա համար մեղադրելով ժողովրդին: Բայց պէտք է նկատել, որ մայիսեան միջոցառումն ուներ նաեւ դրական կողմեր, որոնց նայելիս կարելի է մտածել, որ ամէն ինչ դեռ կորած չէ, որ սոցիալական ու տնտեսական խնդիրները տակ կքած ժողովուրդը հնարաւորութեան չափով դիմադրեց, եւ այդ դիմադրութիւնը ձախողեց իշխանութեան ամենավերելում մտածուած մի նախագիծ, որի անունն է «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւն:

Մօտ մէկ տարի առաջ ստեղծուած այս կառույցը մի նպատակ ունէր՝ երկարացնել Ռոբերտ Քոչարեանի քաղաքական կեանքը: Ազգային ժողովում մեծամասնութիւն ստանալով՝ ԲՀԿ-ն պէտք է դառնար Քոչարեան վարչապետի յենարանն ու նորացուած Մահմանադրութեան ընձեռած հնարաւորութեամբ նրան դարձնէր գործադիր իշխանութեան առաջին դէմքը:

Այս գործն անելու համար ընտրուել էր Հայաստանի ամենաազդեցիկ օլիգարխներից մէկը՝ Գագիկ Մառուկեանը, ով իր տնտեսական յաջողութիւնների համար պարտական է նախագահ Քոչարեանին եւ Կոտայքի մարզում ունի բարեգործի համբաւ: Կոտայքի բնակիչները (անձամբ եմ տեսել եւ լսել) երբեք են Գագիկ Մառուկեանի անունով՝ ասելով, որ ի տարբերութիւն այլ մեծահարուստների, որոնք միայն իրենց գրպանի մասին են մտածում, Մառուկեանն իր ունեցածից բաժին է հանում նաեւ կարիքաւորներին: Նրանք չեն կասկածում, որ Հայաստանի այսօրուայի պայմաններում օրինական ճանապարհով հարստանալ հնարաւոր չէ, բայց նաեւ արգահատելի չեն համարում անօրինական հարստութիւնը, եթէ դրա տէրն առատաձեռն է: «Մարդը մտածում է ժողովրդի մասին» կլիշեն ապահովում է օլիգարխի անմեղութեան կանխավարկածը:

Մառուկեանին ընտրելով՝ Քոչարեանն ուզում էր Կոտայքի մոդելը տարածել ամբողջ հանրապետութիւնում եւ ստանալ մի իրավիճակ, երբ վերնախաւը, հարստութիւնը բազմապատկելուն զուգահեռ,



կատարում է նաեւ շանթարգելի դեր, այսինքն՝ «ժողովրդի մասին մտածելով»՝ զսպում է սոցիալապէս անապահով խաւերի դիտակցութեան հատուցումը:

Այս նպատակին հասնելու համար ընտրուել էր համատարած հաւաքագրման եղանակը՝ նկատի ունենալով, որ կուսակցութեան, ասենք, 370 հազար անդամները լաւագոյն դէպքում կարող են ապահովել 1.5-2 անգամ աւելի ձայն, այսինքն՝ մօտ կէս միլիոնից մինչեւ 750 հազար քուէ:

Եթէ նկատի ունենանք, որ Հանրապետական կուսակցութիւնը Ազգային ժողովում մեծամասնութիւն է ձեւաւորել՝ ստանալով 458,258 քուէ, այսինքն՝ ընտրութեանը մասնակցած քաղաքացիների ձայների մեկ երրորդը, ապա բաւական իրատեսական կարելի էր համարել համատարած անդամագրումներով մեծամասնութիւն վերցնելու տարբերակը: ԲՀԿ-ի անդամներն իրենցից բացի պէտք է ապահովէին լրացուցիչ մօտ 100 հազար ձայն:

Ի՞նչ եղաւ: «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը ստացաւ ընդամէնը 204 հազար ձայն: Սա նշանակում է արդեօք, որ յայտարարուած 370 հազարից 204-ն է հաւատարիմ եղել հարազատ կուսակցութեանը, թէ կարելի է մանրանալ հաշուարկներում եւ պարզել, որ կուսակցութեան անդամներից ընդամէնը 40-50 հազարն է ձայն տուել, իսկ մնացեալը եղել են նրանց ծանօթներն ու բարեկամները, քարոզչութեան ազդեցութեան տակ ընկած մարդիկ: Հնարաւոր է, որ ԲՀԿ-ի ձայները կեղծուած լինեն, բայց կուսակցութիւնը չի պատրաստուում բողոքարկել արդիւնքները, ուրեմն

համաձայն է այն թուի հետ, ինչն արձանագրուած է: Ամէն դէպքում, եթէ կուսակցութիւնը չի հաւաքում անդամների յայտարարուած թուից շատ ձայն, բոլոր թուերը դառնում են առեղծուածային:

Ո՞վ տապալեց նախագահի աշխատակազմում մտածուած «Բարգաւաճ Հայաստան» նախագիծը: Միանշանակ կերպով մեղքը Հանրապետականի վրայ գցել հնարաւոր չէ, թէեւ ԲՀԿ-ի հիմնական մրցակիցն այդ կուսակցութիւնն էր, որն իր նպատակին հասել է բացառապէս վարչական ռեսուրսի օգտագործմամբ: Հայաստանի մօտ 950 քաղաքային եւ գիւղական համայնքներից 507-ը դեկավարում են Հանրապետական կուսակցութեան անդամներ: Դրանցից տասը երեւանի թաղային համայնքների դեկավարներն են: Շատ են նաեւ հանրապետական քաղաքայետերը: Այսուհանդերձ, եթէ Հանրապետականի ստացած 458,258 քուէն բաժանենք 507-ի, կը ստացուի, որ հանրապետական ամէն դեկավար իր հարազատ կուսակցութեան համար ապահովել է 903 ձայն: Բանակ, իրաւապահ, օրինապահ եւ այլ համակարգերն առանձին հաշուարկելու դէպքում այս թիւը զգալիորէն կը նուազի:

Հանրապետականը ԲՀԿ-ից ձայներ խլելու ինդիք չուներ, նա փորձել եւ կարողացել է առաւելագոյն չափով օգտագործել վարչական իր ռեսուրսը: Միաժամանակ, ԲՀԿ-ն էլ գիտէր, որ չի կարող Հանրապետականից ձայներ տանել: ԲՀԿ-ն պէտք է աշխատեր վարչական տիրոջից դուրս մնացած ընտրողների հետ, այսինքն՝ պէտք է ստանար ՕԵԿ-ի խարխուլուած ընտրագանգուածի մի մասը եւ ընդդիմութեան ընտրագանգուածի առաւել յուզական հատուածի («գառ մորթեմ», «ցաւդ տանեմ») ձայները:

Հենց այստեղ էլ բացայայտում են Մայիսի 12-ի միջոցառման դրական կողմերը: Չնայած պոպուլիստական ՕԵԿ-ի խարխուլուած լինելուն եւ ընդդիմութեան անմիաբան մասնակցութեանը, վարչական տիրոջից դուրս գտնուող ընտրագանգ-

ուածը նախընտրեց փոշիացնել իր ձայները, քան թէ տալ մի կուսակցութեան, որի առաջնորդի՝ քաղաքականութեամբ զբաղուելու միակ շարժառիթն ամէն ինչ ունենալուց յետոյ ժողովրդի մասին մտածելն էր: Չհաւատաց ընտրագանգուածը Գագիկ Մառուկեանին, չընդունեց միասին «Բարգաւաճ Հայաստան» կառուցելու նրա հրաւերը, որովհետեւ ենթագիտակցութեան մէջ զգաց, որ եթէ երբեւէ հնարաւոր է բարգաւաճ Հայաստան, ապա դրա հեղինակը չէն կարող լինել նախագահի աշխատակազմի չինովնիկներն ու մի բարեգործ օլիգարխ: Սա հասկանալու համար շարքային ընտրողը շատ երկար չպէտք է մտածեր, ԲՀԿ-ի «Ուժեղներն՝ արդար, թոյլերը՝ պաշտպանուած» կարգախօսն արդէն բացայայտում էր մի շատ կարեւոր հակասութիւն: Բարգաւաճ երկրի քաղաքացին պէտք է ապրի բարեկեցիկ, արժանապատիւ կեանքով, իսկ ԲՀԿ-ի լողունգն ընդամէնը պաշտպանուածութիւն էր խոստանում: Ումի՞ց էր պաշտպանելու Մառուկեանն իր «թուլը» ընտրագանգուածին՝ կարկուտի՞ց, գելի՞ց, շար ու փորձանքի՞ց, պարզ չէր:

Կարելի է արձանագրել, որ ժողովրդի մի ստուար հատուած այս անգամ իրական ընտրութիւն կատարեց՝ ձախողելով նախագահականում մշակուած նախագիծը: Ժողովուրդն ապացուցեց, որ ինքն ուժեղ է եւ արդար, որ թոյլերն են իրենց բարգաւաճ բիզնեսի պաշտպանութիւնը փնտռում Աժ պատերից ներս:

Սա ապագայի մեծ յոյս է ներշնչում: Մեծ յոյս է ներշնչում նաեւ այն փաստը, որ Հանրապետականն իշխող կուսակցութիւն է դառնում՝ ունենալով ընտրութեանը մասնակցած քաղաքացիների ձայների 1/3-ը եւ ընտրութեան իրաւունք ունեցող քաղաքացիների քուէների 1/5-ը: Ժողովուրդը Մայիսի 12-ին, փաստորէն, անվստահութիւն է յայտնել իշխանութիւններին: Մայիսի 12-ին, փաստորէն, իշխանափոխութիւն է եղել: Իշխանափոխութիւն՝ առանց ընդդիմութեան:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»  
ՅԵՌՈՒՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ  
CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ  
ԿԼԵՆՏԵՅԼ - ՊԸՐՊԵՆՔ - ԼԱ ՔՐԵՍԵՆՑ  
ՅԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00

ABA INSURANCE SERVICES  
Blue Shield of California Authorized Agent  
1975-2005  
30th ANNIVERSARY  
E-mail: BMaronian@AOL.com

ԱՊԱԿՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆԿՐԱԺԵՇՏ Է  
ԵՐԻԵՔ ՈՒԾ ՉԷ ԿԵՐԱՔՆՆԵԼՈՒ  
ՁԵՐ ԱՊԱԿՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
ՊԵՏՐՈՍ ԵՒ ՍԻԱՍԱՆԹՕ  
ՄԱՐՈՆԵԱՆ  
818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205  
ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"



### ՆԱԳԱԿԵԱՆ ՄԱՍԻՍ

## ԹՈՒՐԲ-ՇԱՅ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ինչ ակնոցով ալ դիտենք դառն են թուրք-հայ յարաբերութիւնները: Դառն են ոչ թէ Հայաստանի կամ հայկական Սփիւռքին հայկական հարցերու նկատմամբ ունեցած հասկացողութեան պատճառաւ, այլ թուրքիոյ Հանրապետութեան հայկական հարցերու նկատմամբ ընդգրկած քաղաքականութեան հետեւանքով:

Հանրապետական թուրքերը կ'ապրին այնպիսի ցնորական աշխարհի մը մէջ, ուր հայ գոյութիւն չունի եւ ալ չէ ունեցած: Իթիբահատականներուն զծած փան-իսլամական ու փան-թուրանական երազներով կ'օրորուին: Իրենց նախաձեռնութեամբ թիւրքիք հանրապետութիւններու, կամ թուրքիոյ մէջ, պետական բարձր մակարդակի անձերու մասնակցութեամբ, յաճախ, համագումարներ կը կազմակերպեն, հիմքը դնելու՝ իսլամացած «տէօնմէ» հրեաներու պատրաստած թուրանին:

Հայը հանրապետական թուրքիոյ սահմաններուն մէջ գոյութիւն չունի, չէ ունեցած: Փոքր Ասիոյ մէջ հայ գոյութիւն չէ ունեցած: Արեւմտեան Հայաստանի մէջ հայ գոյութիւն չէ ունեցած: Վասպուրականի, Կարսի, Անիի, Կիլիկիոյ հայ թաղաքներու թիւններու մասին դասագիրքներու, տեղեկատուական գրքոյկներու մէջ ծանօթութիւններ չկան: Թրքական թանգարաններու մէջ այդ շրջաններէն մնացած ոչ մէկ առարկայ կը ցուցադրուի:

Շնորհիւ իրենց շինարարական տաղանդին, Կ. Պոլիսը գեղեցիկ պալատներով ու մզկիթներով զարդարած Պալեան ընտանիքի ճարտարապետները «Պալեանի» անունով կը յիշուին: Լեզուգէտ Յակոբ Մարդաեանը Ա. Տիլաչար կոչած էին: Բառարանագէտ, պատմաբան Բարսեղ Թուղլաճեանը Բարս Թուղլաճը անուանած են: Համաշխարհային համբաւի տէր իմբավար Յովհաննէս Չէքիճեան երբ 1960-էն առաջ տակաւին Պոլսոյ մէջ կը գործէր, ձեռնարկներու յայտարարութիւններուն վրայ անոր անունը «Օ. Չէքիճ»-ի ձեւով կը գրուէր:

Թուրքը օգտուեցաւ հայուն տաղանդէն, առանց անոր հայկական ինքնութիւնը հրապարակաբար ցայտելու: Եւ երբ բացայայտեց՝ անձը նսեմացնելու միտումով ըրաւ:

Անցեալ տարի, վանի համալսարանի տեսուչին՝ փրոֆ. դոքտ. Եիւճէլ Աշքընին հայկական ծագումը յայտարարեց, երբ զինք գեղծարարութեամբ ամբաստանելով կը ձերբակալէր: Եիւճէլ Աշքըն թուրք թատրոնին հիմնադիր Կիւլլիւ Յակոբ ալ կոչուած Յակոբ Վարդովեանին (1840-1902) թոռն է: Եիւճէլ Աշքընի հայրը՝ թուրքիոյ նշանաւոր ջութակահարներէն Նէճիփ Եաքուփ Աշքընն է, որ Յակոբ Վարդովեանին, պայմաններու բերումով, Մէհմէթ Եաքուփ անուանուելէ յետոյ ունեցած զա-

լակն է:

Թուրքիա միջազգային ճակատի վրայ ալ հայերու դէմ բռնակալութիւն կը տանի: Հայաստանը չէզոքացնելու, տնտեսապէս սնանկացնելու համար ամէն միջոցի դիմած է: Սահմաններու փակում, շրջապատում, թուրքիան կողկասեան երեք հանրապետութիւններուն կապող շոքեկառքի այժմու գծին տեղ, առանց Հայաստանի նոր երկաթուղիի մը շինութիւն, Պաքուէն մինչեւ Ատանա նաւթատար խողովակներու գետեղում, առանց Հայաստանի, հոգ չէ թէ ճամբան երկարի ու ծախսերը բարդուին:

Հայոց Յեղասպանութեան ուրացում՝ հակայական գումարներու մսխումով, սպառնալիքներով, Պոլսահայ համայնքը անուղղակի կերպով պատանդ բռնելով: Թուրքիոյ դիրքաւորումը հանդէպ հայութեան ու Հայաստանի փոխանակ մեղմանալու, կարծես օր ըստ օրէ դէպի հակառակ ուղղութեամբ կ'ընդանայ:

Բոլոր անոնք, որոնք կը յուսան, թէ թուրքիա Եւրոպական Միութեան անդամակցելով քաղաքակրթեալ մակարդակի մը պիտի հասնի, չարաչար կը սխալին: Այսօր 70 միլիոն հաշուող թուրքիա, 10-15 տարի յետոյ պիտի ըլլայ 100 միլիոն եւ ԵՄ-ի խորհրդարանէն ներս պիտի ունենայ համապատասխան երեսփոխան ու պիտի պարտադրէ իր կամքը, դառնալով պատուհաս մը՝ Եւրոպայի գլխուն:

«ԼՈՒՍԱՔԱՅ»  
ԹՈՐՈՆԹՕ

## ՄԻԱՑԵԱԼ ՇԱՅԿԱԿԱՆ ՖՈՆՏԻ 143ՐԴ ԹՈՒՉՔԸ \$14 ՄԻԼԻՈՆԻ ՆՊԱՍՏ ՈՒՂԱՐԿԵՑ ՇԱՅԱՍՏԱՆ

Միացեալ Հայկական Ֆոնտի 143րդ թուիչքը Երեւան հասաւ Յունիս 2ին, փոխադրելով աւելի քան \$14 միլիոն արժողութեամբ մարդասիրական օգնութիւն:

Այս թուիչքով, Միացեալ Հայկական Ֆոնտը իր կողմէ տրամադրեց աւելի քան \$13 միլիոն արժողութեամբ դեղորայք եւ բժշկական պիտոյքներ, որ նուիրած էին AmeriCares կազմակերպութիւնը (\$6.8 միլիոն արժողութեամբ), Կաթողիկէ Բժշկական Առաքելութեան Վարչութիւնը (\$6.4 միլիոն), եւ Direct Relief International կազմակերպութիւնը (\$7.000):


Հետեւեալ կազմակերպութիւններն ու անհատները եւս ապրանքներ նուիրելով մասնակցեցան այս թուիչքին – Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը (\$400,000 արժողութեամբ), Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը (\$68,000), Գերմանիայէն՝ Հեռախոսաբանութեան Միջազգային Ադակեմիան (\$33,000), Զուիցերիայէն՝ Սեմրա Հիմնարկը (\$30,000), Hologic Inc. ընկերութիւնը (\$30,000), Բժ. Հրայր Կարապետեան (\$28,000), Հայ Միջազգային Ակբանական Ընկերակցութիւնը (\$27,000), եւ Հաուլըրտ Գարակէօզեանի Յիշատակի Ընկերութիւնը (\$27,000):

Թուիչքին մասնակցեցան նաեւ Բժ. Սթիվըն Քաշեան (\$23,000), Սան Ֆրանսիսքոյի Շրջանի Հայաստանի Բարեկամները (\$21,000) Հայ Որբերու Օգնութեան Միութիւնը (\$21,000), Բժ. Սամվէլ Մալայեան (\$18,000), Հայ Երիտասարդաց Դաշնակցութիւնը (\$15,000) եւ Հայկական Օգնութեան Ֆոնտը (\$13,000):

1989էն ի վեր, Միացեալ Հայկական Ֆոնտը 143 թուիչքներով եւ 1,449 ծովային արկղներով \$496 միլիոն արժողութեամբ մարդասիրական նպաստ ուղարկած է Հայաստան:

Միացեալ Հայկական Ֆոնտը համատեղ աշխատանքն է Ամերիկայի Հայկական Համագումարին: Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան, Հայ Օգնութեան Միութեան, Հայաստանեայց Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Առաջնորդարանին, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ամերիկայի Առաջնորդարանին, եւ Լինսի Հիմնարկին:

Յաւելեալ տեղեկութեան համար, կը խնդրուի դիմել Միացեալ Հայկական Ֆոնտի գրասենեակին՝ 1101 North Pacific Avenue, Suite 301, Glendale, CA 91202 կամ հեռաձայնել (818) 241-8900 թիւին:



# Happy Fathers Day

## Հայրերու Օրուայ Ճաշկերոյթ

Կազմակերպութեամբ՝  
«Մ.Մ.»-ի Տիկնաց Օժանդակ Մարմնի

Յունիս 17, 2007

Կէսօրէ ետք ժամը 1:00-էն սկսեալ



162 N. SIERRA MADRE BLVD.  
PASADENA, CA 91107

Մուտքի նուէր \$30

Տոմսերու համար հեռաձայնեցէք  
(626) 793-6220, (626) 354-5924


Ձեր ճանուցումները  
Վստահեցէք  
«Մասիս»  
Շարաքարթրփին  
T: (626) 797-7680  
F: (626) 797-6863  
Email: massis2@earthlink.net

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

ՍԱՐԳԻՍ ՎԱՐՍԱԳՆԸ ԸՍՏ ԱՐԺԱՆԻՈՅՆ ԳՆԱՐԱՏՈՒԵՑԱՒ

Տ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Մեծ է մեր ուրախութիւնը երբ կը տեսնենք ազգային դէմքեր, որոնք նիւթապէս, բարոյապէս եւ գործնապէս, մշտանորոգ ծառայութեան մէջ գտնուելով հանդէպ իրենց ժողովուրդին՝ կը գնահատուին, նոյնի՛նքն իրենց ժողովուրդին կողմէ: Մեր այդ ուրախութիւնը կը կրկնապատկուի, կը բազմապատկուի՝ երբ այդ մեծարանքին կ'արժանանան մտքի՛, հոգիի՛, մշակոյթի՛ ու գեղարուեստի՛ նուիրեալներ, որոնք առանց նիւթական ակնկալութեան, լուռ ու խոնարհ՝ օրեր, ամիսներ, անգամ տարիներ՝ անկիւն մը առանձնացած, կը պեղեն մարդու միտքն ու հոգին, լոյս աշխարհ բանալու համար նոր հորիզոններ, որոնք կոչուած պիտի ըլլան սնունդանելու մեր ազգային արմատները, պահպանելու մեր ազգային ժառանգութիւնները, գարկ տալու մեր ազգային արժանապատուութեան եւ ուժաւորելու մեր ազգային ինքնութիւնը:



Սարգիս Վահագնի նուիրուած մեծարանքի հանդիսութիւնը տեղի ունեցաւ Հինգշաբթի, Մայիս 31, 2007-ին, Կլենտէյլի Կեդրոնական Գրադարանին մէջ, երեկոյեան Ժամը 8:00-ին: Ուրախալի էր տեսնել բազմամարդ ներկայութիւնը գրող, գրասէր, հարազատ ու բարեկամ հասարակութեան մը, որ փութացած էր համանուն կեդրոնի հանդիսարանը, շնորհաւորելու համար յոբելեարի ծննդեան 80-ամեակը, ու գնահատելու համար անոր յոբելեանական տարեթիւնի գուգադիպող հայ գրականութեան ընծայաբերած գեղարուեստականօրէն յազեցած թարգմանական աշխատանքը, անշուշտ, առանց մոռացութեան տալու Ս. Վահագնի կողակիցին՝ Տիկ. Հայկունի Փաթափութեանի քաջալերանք-իրողութեան առկայութիւնը, որ մղիչ ուժը հանդիսացած էր, «Շուրջը Ոչինչ»-ի թարգմանական գործին, ինչպէս պիտի վկայէր յոբելեարը:

Ներկայ հասարակութեան գաղափար մը տալու մտօք, կը թուի, ներկայացուած գիրքին մասին կարգ մը գեղարուեստական ընթերցումներ կատարեց իբրեւ ասմունքող գաղութիս ծանօթ արուեստագէտներէն Լեւոն Ֆէրմանեան, որուն յաջորդեց յարգելի յոբելեարի գրքին որպէս նախաբան գրած «Ինչո՞ւ այս գիրքը» բացատրող գիրքի ընթերցումը:

Սարգիս Վահագն կը գտնէր, «թէ աններելի սխալ մը եւ մեծ թերացում մը պիտի ըլլար տէր չկանգնիլ եւ մեր քերթողական անդատանին չբերել բանաստեղծական այս կոթողական ժառանգը, որ հակառակ իր լեզուական պատուա-

Շաբ.ը էջ 17

«ELON»Ի ԶԱՄԵՐԳԸ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԵՆԱՆ

Ինչո՞ւ մեղքս պահեմ: Զարմացած, տպաւորուած եւ քիչ մըն ալ լիցքաւորուած, վերադարձադուր երեկոյեան, ժամը 11ի շուրջ «Ալէքս» թատրոնէն ներս «Elon»-ի համերգին ներկայ գտնուելէ ետք: Բացի իր իւրայատուկ անունէն, անգլերէն «Elon», ոչինչ, գրեթէ ոչինչ լսած էի այս յարաբերաբար անծանօթ երգիչի մասին, մանաւանդ երգի իր ժանրի մասին: Բանից դուրս եկաւ որ բաւականին տաղանդաւոր կազմակերպչական կարողութիւններով օժտուած մէկն է ինք, որուն նոյնիսկ ընտանեկան անունն իսկ չէր գրուած քիչ մը տարօրինակ եւ ծիածանի գրեթէ բոլոր գոյներով տպուած յայտագրէն ներս, յայտագիր որ կը փայլէր իր անճաշակութեամբ եւ բովանդակութեան խաչտաբղէտութեամբ: Օրինակի համար եթէ Գալիֆորնիահայ Բժշկական Միութիւնը կ'ուզէր սոյն ձեռնարկին իր նպաստը բերել, կրնար պատշաճ մաղթանքով մը մասնակցել, փոխանակ իր վարչութեան անդամներուն անունները դնելու յայտագրի վերջին էջին վրայ: Ամէն պարագայի, եթէ գրքոյկները ծանուցողներու փափաքները պէտք է արտայայտեն, անհրաժեշտ պէտք է նկատուի սակայն որեւէ ձեռնարկի յայտագիրը որոշ չափով ներկայացնել իր մանրամասնութիւններով: Զկրցանք ունենալ երգուած երգերու անունները, թէեւ ինք, երգիչը, զանոնք կը յայտարարէր երգելէն առաջ: Եթէ ներկաներէն ոմանք բարձրաձայն չչայտարարէին Ազնաւուրի անունը, շատեր կրնային կարծել որ ինքն է այդ երգերու հեղինակը:

Նաեւ խոցելի կէտերէն մէկն էր համերգի ձայնային ձեւաւորումը որ նոյնպէս արժանացաւ ներկաներու ոմանց բարձրաձայն քննադատութեան:

Այս քննադատական նկատումներէն ետք վստահաբար շտկուելիք յետագայ համերգներուն, անցնինք երեկոյի դրական յատկանիշերուն:

«ELON»Ի ԱՐՈՒԵՍՏԸ  
Մենք բաւականին ծանօթ ենք, մանաւանդ Ֆրանսական մշակոյթէն ներս անուններու, որոնք «Chansonnier» կը կոչուին: Բազմաթիւ են անոնք: Պրէյ, Անուլթուքի, Ֆերտա, Պրասնա, եւ բազմաթիւ ուրիշներ տասնամեակներու ընթացքին խանդավառած են հազարաւոր ունկնդիրներ: Մեր մէջ ծանօթ ենք

Ռուբէն Հախվերտեանի, Մեսեանի անուններուն, եւ իր իսկ այսինքն «Elon»-ի խոստովանութեամբ ինք Միսեանի եւ մեծն Ազնաւուրի հիացողներէն եւ հետեւողներէն է:

Ինք հաճելի ներկայութիւն մըն է բեմի վրայ, ինքնավստահ եւ հաղորդական: Մանաւանդ գիտէ գինք լսողներու մօտ դրական տպաւորութիւն մը ձգել: Սակայն այդ երեկոյի յարաբերական յաջողութիւնը արդիւնք էր ոչ միայն «Elon»-ի, այլ իրեն ընկերացող նուագախումբին, դեկավարութեամբ եւ յաջող կերպով խմբավար Միքայէլ Աւետիսեանի: Իր հետ նաեւ կային բազմաթիւ տաղանդաւոր երաժիշտներ - Արա Տապանճեան, երիտասարդ ձիւան Գասպարեան եւ բազմաթիւ ուրիշներ, երկար ցանկ մը շնորհալի նուագողներու, որոնք մաս կը կազմէին տպաւորիչ նուագախումբին եւ երգեցիկ խումբին: Բաւական առատ էին երաժշտական գործիքները, եւ ասոնք ալ դեր ունեցան երեկոյի յաջողութեան մէջ: Պէտք է յատկապէս յիշել նաեւ բեմական տեքորի տպաւորիչ եւ գեղեցիկ ձեւաւորումը եւ լուսաւորումը, գործ Սահակ Էքէ-եանի եւ «Unitone» ընկերակցութեան:

Իսկ ապագայ հեռուստառեժիսորներ Արփի Պողոսեանը եւ Արմէն Սարուխանեանը ներկայացրել էին վաւերագրական ֆիլմեր: Արփիի «Ժամանակ» ֆիլմը, ինչպէս վերնագիրն է չուշում, պատմում է ժամանակի եւ ժամացոյցների մասին, իսկ Արմէնի «Բնութեան խողեր»-ը ներկայացնում է մեր երկրի բնութիւնը ներդաշնակ երաժշտութեան ներքոյ: «Սիրում եմ» խաղարկային ֆիլմի հեղինակն է Լիլիթ Գասպարեանը, ով սովորում է հեռուստառեժիսուրայի բաժնում: Ֆիլմը պատմում է մանկատ-

նից դուրս եկած մի տղայի մասին, ով աշխատանք է փնտրում, սակայն ապարդիւն: Իսկ ահա զեղարուեստական լուսանկարչութեան բաժնի ուսանող Դաւիթը փորձել էր տարբերուել մրցակիցներից եւ «Ես եմ»-ին ներկայացրել էր «Տարօրինակ մարդ» տեսահոլովակով:

Ընդհանուր առմամբ ժիւրիի անդամները դժգոհ էին հայկական խաղարկային ֆիլմերից. «Շատ խղճուկ տեսք ունէին խաղարկային ֆիլմերը, վաւերագրական ֆիլմերը շատ աւելի ուժեղ էին, որը պայմանաւորուած է նախ եւ առաջ գրականութիւնից, դրամատուրգիայից, մեր երիտասարդութիւնը գիրք չի կարդում, իրենց գլխից բաներ են հնարում կամ նայում են ամերիկեան ֆիլմերն ու նկարում դրա 1000 անգամ սարսափելին», - պատմում է Ռ. Գէորգեանը:

Անցեալ տարի փառատոնի կազմակերպիչները յայտարարել էին, որ փառատոնը լինելու է երկու տարին մէկ, բայց քանի որ չէին հասցրել գգուշացնել արտերկրին եւ մեծ թուով ֆիլմեր էին եկել, այդ իսկ պատճառով այս տարի «Ես եմ»-ը կայացաւ: Սակայն կազմակերպիչներն այս անգամ արդէն վստահօրէն յայտնեցին, որ փառատոնն անցկացուելու է երկու տարին մէկ, քանի որ կուտակումներ չեն լինում եւ փառատոն անցկացնելու համար մէկ տարին շատ քիչ է:

«Մենք երիտասարդներից սպասում ենք ուրիշ բան, բոլորը կինո են, բայց ֆիլմ թերեւս չի երեւում: Ժիւրիի համար աշխատանքը շատ

թեթեւ էր, վիճելու բան չկար, հիմնականում միջակութիւն էր, բայց միջակութիւնը արուեստում բաւարար չէ, երեք չէ, այլ զրո է», - ասում է Սուրէն Յամիկեանը:

Կինոփառատոնն ունէր նաեւ հիւրեր. երկու ռեժիսոր Ռուսաստանից՝ Ֆիլիպ Կորշունովն ու Գէորգի Մալխոյովը, եւ Ղասախստանից Ալբէկ Դալբէկը, ով ներկայացրել էր «Բերեզ» (թարգմանաբար՝ ափ) ֆիլմը, որն էլ ստացաւ լաւագոյն խաղարկային ֆիլմ մրցանակը: Այն պատմում է մի աղջկայ ու տղայի մասին, ովքեր սիրում են իրար, բայց տղան, սիրած աղջկան թողնելով յղի վիճակում, վերադառնում է իր հայրենիք: Սա Դալբէկի առաջին աշխատանքն է, առաջին փառատոնը եւ առաջին մրցանակը. «Երբ այստեղ էի գալիս չէի մտածում, որ կը յաղթեմ, ընդհանրապէս չէի սպասում: Շատ լաւ է, որ հայ երիտասարդներն ունեն այսպիսի փառատոն: Ես առաջին անգամ եմ Հայաստանում եւ ինձ դուր է եկել ձեր նիստուկացը, ես անպայման կը վերադառնամ»:

Վեց անուանակարգից ժիւրին յանձնել է միայն 3-ը, իսկ միւս 3-ը մնացին առանց տէրերի, էլ չենք խօսում, որ այս երկու տարուայ ընթացքում ոչ մի ֆիլմ չի արժանացել գլխաւոր մրցանակին, եւ գրան պրին արդէն 2-րդ տարին է, ինչ մնում է կինոմատոգրաֆիստների միութիւնում. «Մրցանակի արժանի ֆիլմ չկար, որ լինէր կը տայինք, միայն դիպլոմների էին արժանի», - ասում է Ռ. Գէորգեանը:

Լաւագոյն վաւերագրական ֆիլմ է ճանաչուել Տիրան Կարապետեանի «Ջուղա» ֆիլմը, որը ստացաւ Արա Վահուտեան անուան մրցանակ: Այն պատմում է Ջուղայի աշխարհահռչակ գերեզմանոցի աւերման մասին:

Լաւագոյն ուսանողական աշխատանք անուանակարգում յաղթող ճանաչուեց Արթուր Ուստեանի «Յիշողութեան Հետքերով» վաւերագրական ֆիլմը, որի հիմքում արտացոլուած են հայրենիքին նուիրուած մարդու խոհերն ու ապրումները:

«Ես եմ»-ը կազմակերպելու համար, ըստ փառատոնի նախագահի, ծախսուել է 17-18 հազար տուրք, որից 1.5 մլն դրամ տրամադրել է Մշակոյթի նախարարութիւնը, իսկ մնացածը Ռ. Գէորգեանցի ընկերների շնորհ է:

Մեծ թուով ֆիլմեր ստացան դիպլոմներ, կային աշխատանքներ, որոնք դիպլոմից բացի ստացան նաեւ դրամական պարգեւներ եւ մէկ ֆիլմ նկարելու համար անհրաժեշտ տեխնիկական օգնութեան հնարաւորութիւն: «Դահլիճում նստած նեղացած հայեացքներով ինձ էին նայում իմ ընկերների երեխաները, ովքեր մրցանակներ չստացան, բայց սա փառատոն է եւ երիտասարդներին խաբել չի կարելի», - եզրափակեց ժիւրիի նախագահ Ռ. Գէորգեանը:

Փառատոնին մասնակցել ցանկացողները կարող են դիմել «Նոր Սերունդ» մշակութային Միութեանը, որը ձեզ կ'աջակցի ֆիլմերը ներկայացնել «Ես եմ» եւ «Ոսկե Միրան» կինոփառատոններին:

[www.massisweekly.com](http://www.massisweekly.com)



WWW.GILIGIANCOLLEGE.COM (818) 956 9600

CAMPUS 2361 FLORENCITA DRIVE MONTROSE, CA 91020 OFFICE 1650 FLOWER STREET, GLENDALE, CA 91201

Managerial Courses

- 1- Office Administrator
2- Computerized Accounting
3- Administrative Assistant
4- ESL
5- Computerized Taxing
6- Medical Billing

Design Courses

- 7- Web-Site Design
8- Video & DVD Editing
9- 3-D Modeling
10- 3-D Animation
11- Graphic Design
12- Photo Editing
13- AutoCAD

Technical Courses

- 14- PC Systems Technician
15- Network Administrator
16- Desktop Publishing
17- Visual Basic programmer

Our Dedication Is

To educate key job skills for a better workforce performance. To give you access to the opportunities and tools of the modern employment markets.

To support the workforce development with a sustainable education. To improve your job performance by developing your skills.

We offer efficient course clusters for an intensive and competent training.

We Provide State Funded Program For Employers and Employees (ETP) We Accept Workers Compensation Training Vouchers

ԳՐԱԿԱՆ

ԳԱՐՈՒՇ ԶԱՐԵԱՆՑ - 60

2007 թ. Մայիսի 7ին լրացաւ տաղանդաւոր բանաստեղծ, բեմադրիչ, թատերգակ, Գալիֆորնիայի Հայ Գրողների Միութեան վարչութեան քարտուղար, ճանաչուելու մտաւորական ԳԱՐՈՒՇ ԱԻԵՏԻՔԻ ՀԱՐԵԱՆՑԻ ծննդեան 60-ամեակը: Վաստակաշատ գրողը բոլորեց նաեւ իր գրական գործունէութեան 45-ամեակը՝ ստեղծագործական նորանոր ծրագրերի իրականացմամբ, որոնցից են հրատարակութեան պատրաստուող հազար ու մի քառեակների ընտրանին, առակների ժողովածուն եւ երկու վէպ: Անուանի բնաստեղծն իր անհատականութեան ինքնատիպութեամբ, գրողի քաղաքացիական եւ ազգային պատասխանատուութեան արթնութեամբ միշտ էլ առանձնանում է թէ՛ հայրենի, եւ թէ՛ սփիւռքեան արդի գեղարուեստական գրականութեան անցողիկ շնորհներով՝ պաշտպանելով ու պահպանելով տիեզերական ժամանակի ու տարածութեան ըմբոստ շնչառութիւնը, գրական ռազմավարութեան գիտակցուած հրամակայականը: Յորեկինական հանդիսութիւնը կը կայանայ աշնանը:

Մեր ընթերցողների ուշադրութեանն ենք ներկայացնում յախուռն, բազմաժանր հեղինակի նոր քառեակներից մի փունջը:

»ՋԱՉԱՐ ՈՒ ՄԵԿ ԶԱՄԱՉԱՐԿ« ԳՐՔԻՑ

Ես եկել եմ, որ բոլորին բարեւ տամ, Զրահալած անտառներին տերեւ տամ, Ես չեմ գնա, պիտի մնամ այնքան, որ խաւարադաւ աշխարհներին արեւ տամ:

Զնծադիկ եմ հիմա ես՝ երկու քարի արանքում, Արեգակ եմ հրակեղձ՝ երկու սարի արանքում, Լուռ բացուում եմ ու փակուում՝ սկիզբ ու վերջ խառնելով, Թունմանեանոտ երգ եմ ես՝ երկու դարի արանքում:

Ջրեր, կանգ առէք, երբ ես եմ հոսում, Զողմեր, լռեցէք, երբ ես եմ խօսում, Կեղծաւոր սրբեր, աչքիս չերեւաք, Ինձ ճշմարտութեան արքայ եմ ասում:

Նարեկացին իմ ոգին ճանաչեց, Օմար խայամն իմ ճակատը պաչեց, Բայց ամէնքից շատ քառեակի հարցում Թունմանեանն ինձ հետ հպարտ հառաչեց:

Իմ բախտահիւ, մի պատուիր էլ ի գուր, Գարին երբեք չի մեծանայ հանց մասուր, Էլ ո՛ր մնաց, որ մեր ցորեմն ընկոյզուի, Ազգն է Միեր, Ազգավաքարն է ասում:

Տիգրան Մեծի ծոռն եմ ես, Խորեմացու թոռն եմ ես, Զայոց Դատը միշտ վկայ Թուրքի ցաւ ու չոռն եմ ես:

Զառաչում եմ աւերակաց քարերը, Ամաչում եմ գերի ընկած սարերը, Աստուածուրաց մոլախոտի ստուերից Կեանք եմ մուրում փառքի ծնկած դարերը:

Յեղակրօնս, քո երգն ու պարը Նոյնն եմ, ինչպէս որ բեկորն ու քարը, Յարատեւում եմ մէկը մէկի մէջ Այնպէս, ինչպէս որ վայրկեանն ու դարը:

Ջուրն է չլուծ ետ գնալիս, Թէեւ գետը ետ չի գալիս, Երկիրը տունն է թռչունի, Բայց երկինքն է թռիչք տալիս:

Մի օր պիտի նարդի խաղաղը լուսնի վրայ,

Մեր հայութեամբ հիմքից փոխեմք կեանքը նրա, Գարեջուրն էլ հո կը լինի նարդու կողքին, Թէ ուզեմայ ջուրը կրկին մարել կրակ:

Աւաղ, ասես գառնացում եմ նորերը, Նրանց տխուր ծայնակցում եմ ձորերը, Տեղը տեղին, հասկանալի խօսք չկայ, Ախ, վերստին տափակուում եմ խորերը:

Իմ վրայով ապշահար խաւարասէր է վազում, Կարգին ապրելը թողած՝ իր վախճա՞մն է նա ուզում, Որ փախչում է ցերեկից, ատում է լոյս ու արեւ, Սատկելու հետ հաշտուած է անմահութիւն երազում:

Եթէ ա՛րտ է, հնձել պիտի իմանաս, Եթէ վա՛րդ է, քաղել պիտի իմանաս, Ամէն ինչն էլ ունի ուրոյն պատասխան, Սաղաւա՛րտ է, կրել պիտի իմանաս:

Անդաւաճան բացն եմ սիրում, ոչ թէ գոցը, Աստուածային-մարդ արարող սիրոյ ծոցը, Թէ երկրից երկինք պիտի լոյսը գնայ Թող իմ միջով անցնի նրա անմահ բոցը:

Մի մոռացիր, թէ որտեղից եկար դու, Ում տիրեցիր, ում էլ ծառան եղար դու, Բարու մտարն ուղիղ պահիր, շուռ չտաս, Որովհետեւ չարին ընդդէմ ելար դու:

Լուռ կանաչում է մեր դրան թխկին, Արհամարհելով ամպագոռ թխպին, Ամէն բողբոջից գարունն է կաթում, Կարօտի լիճ է գոյաճում թրթին:


Ամերիկան չի գարնանում, գարնացնում է, Ցոփ ու շուլայտ իր կեցնաղով գայրացնում է, Առետուր է վարում արեան ու քարիդի, Խղճայարոյց պարզն էլ անգամ բարդացնում է:

Աղմուկի հարցում լուռն էլ է գիտակ, Փակ շէնքի համար դուռն էլ է պիտակ, Նախանձի քրմեր, հասկացէ՛ք, ախր, Գարուշ Զարեանցի ծուռն էլ է շիտակ:

«ԲՆԱՊԱՅՊԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՍՏՈՒԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ» ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

Յունիսի 4-ին «Արմենիա Մարիթ» հիւրանոցի «Աշոտ Երկաթ» դահլիճում տեղի ունեցաւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վազգէնեան Հոգեւոր դպրանոցի եւ Երեւանի Պետական Համալսարանի համատեղ ջանքերով լոյս տեսած «Բնապահպանութիւն եւ Աստուածաբանութիւն» գրքի շնորհանդէսը: Գիրքը հրատարակուել է վազգէնեան Հոգեւոր դպրանոցի փոխատեսչ Տ. Մինաս քահանայ Մարտիրոսեանի, ԵՊՀ էկոլոգիայի եւ բնութեան պահպանութեան ամբիոնի վարիչ Կառլէն Գրիգորեանի եւ ԵՊՀ էկոլոգիայի եւ բնութեան պահպանութեան ամբիոնի դոցենտ Ալեքսանդր Եսայեանի համահեղինակութեամբ: Գրքի հրատարակութիւնն իրականացուել է Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի Հայաստանեան Կլոր սեղան հիմնադրամի հովանաւորութեամբ՝ «Կանաչ աստուածաբանութիւն» ուսումնական ծրագրի շրջանակներում: Գրքում ներկայացուած են էկոլոգիայի եւ բնապահպանութեան հիմունքները եւ Քրիստոնէական Եկեղեցու տեսակէտն էկոլոգիական ճգնաժամի մարդածին լինելու վերաբերեալ: Որպէս այդ ճգնաժամից դուրս գալու միակ ու ճշմարիտ ճանապարհ՝ նշուած է մարդու ապաշխարութիւնը՝ գուղակցուած քրիստոնէական հիմնական առաքինութիւններով՝ զարդարուելու եւ իր բարձրագոյն կոչմանը հասնելու փափաքով:

Հանդիսութիւնը բացուեց ԵՂՊ Հայաստանեան Կլոր սեղան հիմնադրամի գործադիր տնօրէն Գոկտոր Կարէն Նազարեանը: Այնուհետեւ մարդ արարածի՝ բնութեան պահպանութեան ու ինամքի աստուածաւանդ առաքելութեանն անդրադարձաւ Արցախի թեմի առաջնորդ, Կլոր սեղան հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Գերաշնորհ Տ. Պարգեւ Արքեպիսկոպոս Մարտիրոսեանը, որն ընդգծեց մարդու դերն արարչութեան մէջ ոչ իբրեւ տիրակալի, այլ առաջնահերթօրէն իբրեւ ինամակալի ու մշակի:



Ապա հրատարակութեան կարեւորութեան մասին խօսեց ԵՊՀ Կրթութեան վարչութեան պետ Հ. Ժամհարեանը՝ ընդգծելով, որ այս ոլորտում սա առաջին հայալեզու ձեռնարկն է եւ մեծ արժէք ունի ուսանողների համար: Տ. Մինաս քահանան ու Կ. Գրիգորեանը ներկայացրեցին գրքի ստեղծման ընթացքն ու ներառած խնդիրները: Ելոյթ ունեցան նաեւ բնապահպանական տարբեր կազմակերպութիւնների ներկայացուցիչներ՝ գուգահեռներ տանելով քրիստոնէական աստուածաբանութեան եւ բնապահպանութեան միջեւ:

Հանդիսութեանը ներկայ էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Վազգէն վրդ. Նանեանը եւ վազգէնեան Հոգեւոր դպրանոցի տեսուչ Տ. Մկրտիչ վրդ. Պոռչեանը, ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնեանը, ԵՂՊ նախկին գլխաւոր քարտուղար Կոնրադ Ռայգերը, ԵՂՊ Հայաստանեան Կլոր սեղան հիմնադրամի եւ ԵՊՀ պաշտօնէութիւնը, այլ յարանուանութիւնների եւ բնապահպանական տարբեր կազմակերպութիւնների ներկայացուցիչներ:

Merrill Lynch INVESTMENT BANKING JACK KALANJIAN Professional Financial Advisor Corporate Center Pasadena 225 So. Lake Avenue Pasadena, CA 91101 (626) 396-2825 Direct (626) 376-4665 Fax jack\_kalanjian@ml.com "Helping the Armenian Community Build Wealth"

HARUT DER-TAVITIAN License #0828270 1807 W. Glenoaks Blvd., Suite 202 Glendale, CA 91201 Tel.: 818/502-3233 Fax: 818/502-3244 Pgr.: 818/608-9898 info@excelhye.com www.excelhye.com EXCEL HYE INSURANCE SERVICES AUTO • HOME • LIFE • HEALTH • DISABILITY • COMMERCIAL

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՆ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ) ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹԵՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ 1060 N. ALLEN AVE. PASADENA ԸՆՈԱՉԱՅՆԵԼ (626) 797-7680 (626) 398-0506

ՊԱՏՈՒԱԾԵ

ԴԵՊԻ ԿԱՐՕՏԻ ՃԱՄԲԱՆԵՐ ԳՈՐԻՍ ԲԱՂԱՔՈՒՄ

ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ

Սարահարթի բարձունքի անտառակի մոտեցնելու կանգ է առնում ինքնաշարժը: Գուրս ենք գալիս, կանգնում խճուղիի առաջին ոլորանի եզրին, բարձրից դիտելու ու գմայլելու, հովիտում փռուած Գորիս քաղաքի համայնապատկերի սքանչանքով: Նազանի Գորիսը, իրարու թիկնած շարան, շարան սնեղով իջնում է դէպի հովիտի խորքը, իր ոտքերը մխրճելու գետակի փրփրած ջրերին: Արեւն էր իջել սնեղի կարմիր տանիքներին, իր արծաթ ճառագայթները ասի, ասի նետում նրանց գրկած ծառերին, որոնք կանաչով էին քողել քաղաքը: Զարմանալի պիտի չթուար արդեօք օտար ճամբորդին այս լեռների գրկում նման քաղաքի հանդիպելը: Կարծես քանակով գծուած փողոցներ են, որոնց երկայնքին կանաչ պարտէզներով գուգուած բազմալարկ եւ երկլարկ բազալտ քարով պատած, կարմիր կտուրներով սնեղի շարաններ:

Հովիտի արեւելեան լանջին հին Գորիսը, Կյորէս-ն է: Հեռուից էլ քարանձառների ու քարայրների սեւ մոտեքերն են նշմարուած: Դեռեւս վաղ ժամականերում, նոյնիսկ խորը հնադարում, բնակավայր է եղել այն՝ դէպի Արցախ ու Մերձկասպեան տափաստաններ տանող բանուկ ճանապարհին: Ռուս Պարսկական պատերազմի ժամանակ այստեղ է տեղաւորուած եղել ռուսական զինուորական գունդ:

Հին Գորիսի թիկունքի հովիտի եզրին, բնութեան արարչութեան հուշակաւոր քարէ «Բուրգեր» են կանգնած: Կարծես արտաքին ուժերն են քանդակել հողից բուսած հսկայ քարէ սունկեր, քարածաղիկներ, հաւքեր, բազմազլխանի վիշապներ, թեւատարած արծիւներ եւ եթէ երկար դիտէիր, հազար ու մի տեսակ քարէ պատկերներ կարող էիր երեւակայել: Այդ ժայռէ տարբեր «յուշարձաններ»ը երբեմն նոյնիսկ մինչեւ 10-20 մեթր բարձրութեան են հասնում: Կարծես հիմա էլ այդ բուրգերի վրայ այն հսկաներն են կանգնած, որոնք սպառնազին ձօձում են իրենց հաստ ու կլոր գլխանի բիրերը յարձակուող ամբոխի դէմ, սակայն նկատելով Քաջ Նազարին վազը հեծած, փախչում են ապաստանելու իրենց ամրոցը:

Այդ վայրերում են նկարահանուած եղել «Քաջ Նազար» շարժանկարը: Իրապէս սարսափելի է դիտել այդ բնակերտ ժայռէ «արձաններ»ը, իրենց ահազող տեսքով: Երեւի հակադրութեան համար այդ վայրերը ընտրել էին նկարահանման համար: Քաջ Նազար, արդեօք այն աւելի խորիմաստ չէ քան սպանացի Սերւանդէսի «Տօն Քիչոթ»ը: Այն երբեք խնդալի չէ, ինչպէս է նաեւ անգերազանցելի երգիծաբան Պարոնեանի «Պաղտասար Աղբար»ը ու այլ երկեր, իսկ եթէ խորը մտածելի պիտի չտխրէիր արդեօք: Զէ, գուարձանքի համար չեն յօրինուած նրանք, մարդկային «ես»ի, նրա արատների պարսաւանք են: Եւ ինչքան «Քաջ Նազար»ներ կան հիմա մեր հայրենիքում, որոնց ոչ թէ «Ուստիան»ներ են իրենց գահերից վայր գլորելու, այլ գալիք սերունդի իրենց արմենական ցեղին սրտի կանչով իմաստացած

տղաներ են գալու վայր իջեցնելու նրանց իրենց տիրակալութիւններին եւ ճիշտ կառավարելու երկիրն ու հայերին, օրէնքի գերակայութեան իշխանութիւն հաստատելու: Ինքնաշարժը խճուղիի ոլորաններով իջնում է քաղաք, արեւի գուարթ լույսն է այն քողել, գուարթութեամբ է յորդած հողիս, գուարթ են մայթեզրի ու սնամբէր պարտէզների խնձորենիները, որոնք ճիւղակոտոր խոնարհուած սպասում են իրենց բարիքը ձօնելու մշակներին: Խինդն է պոռթկում դէմքիցս, Գորիսի միջքաղաքային ճանապարհներով հասնում եմ Քուստունց Լեռնի, նրա որդի Սարգիսեան Ասպետի տան շէմին: Աւագ քոյրս է «Ճանիղ մեռնեմ» կանչելով վազում բազկատարած գիրկս: Արմենական գերդաստանի երկու Լագիսեաններ, տանամեայ կարօտից լացում են թէ հրճուած, աչքերից ու դէմքերից պայթում է իրենց ծիւղերի կանչի լոյսը: Հայրենադարձ Կապուրալ Արմենակի Մուսա Լերան Եօղունուղի Սիմա դուստրը Գորիսեցի եղաւ: Զանգեզուրցի անչափ ազնուութեամբ յորդած տղուն պարգեւեց երեք առու գաւակներ, որ նրա գերդաստանը յարատեւի, որոնց սրտերին իջան նաեւ Մուսա Լեռցի Արմենակի գերդաստանի ծիւղերը: Եւ արդեօք Մուսա Լերան շունչը չեկաւ գրկելու նաեւ Զան-

գեզուր աշխարհի «վեհապան» այս լեռները:

Գորիս քաղաք, հիմնադրուել է 1870 թուականին՝ որպէս էլիզաւետպոլ նահանգի, Զանգեզուր գաւառի, ապա շրջանի վարչական կեդրոնը, որը Երեւանից 254 քմ. եւ Կապան քաղաքի երկաթուղային կայարանից 67 քմ. հեռաւորութեան վրայ է: 1890 թուականին այն յատակագծել էր գերմանացի ճարտարագէտը՝ ուղիղ ու լայն փողոցներով, կեդրոնական զբօսայգիով: Մինչեւ այժմ էլ աւանդապահ գործիւնները պահպանում են նրա ուրոյն գեղեցիկ դէմքը եւ նոր շինութիւններով չեն խաթարում նրա հիմնական յատակագիծը:

Գորիս գետն է հոսում քաղաքի հովիտով, որը ներքեւ իջնելով նեղանում եւ Քարահունչի լեռնաբլուրի մօտ վերածուած խորը ձորի: Հովիտի ապառաժ քարափները, բրգաձեւ գագաթները, քարայրները ու քարանձառները հմայիչ տեսք են հաղորդում նրա արտացայտքին: Լեռնային բարեխառն կլիման, շրջակայ լեռների լանջերի ծաղկունքի բոյրը քաղած հովիկները անուշ արբեցում են պարգեւում մարդկանց:

Գորիս, Զանգեզուր, հայկական կամաւորական լեգէոնի կապուրալ Արմենակը, աւագ քոյր Նեկտարի հետ, այս լեռները բերեցին իրենց հինգ գաւակներով ընտանիքը: Լեռներ, ինչքան էին նրանք նման իրենց հայրենի Մուսա Լե-

րան: Այստեղ էին նաեւ մղուել ազատագրական բազում կռիւներ, այստեղ էլ շինականները ապստամբել, գէնք վերցրել իրենց լեռներին կարմիր տիրակալութիւն բերող իշխանութեան դէմ, սեւ հողիներով կարմիր զգեստ հագած թաթարթուրի դէմ: Արմենակի տղան, երկու դուստրերը, ամէն մէկը աշխարհի մի կողմը հողմահարուած, գրկել են իրար, աչքերից կարօտի բոցեր են ժայթքում, տուն են բերել իրենց հայրիկին, մայրիկին, եղբայրներին, զրուցում նրանց հետ, կանչում, ծիծաղում, լացում մելամաղձոտ խոովքից: Ասպետ ու տղաները հաւաքուած նրանց շուրջը, իրենց էլ են միանում նրանց խոովքին, հրճուանքին եւ ժպիտ է կաթում դէմքերից՝ սիրոյ խանդադատանքի լոյսով գեղուն ժպիտ: Հայ, դու ինչու ես փախել քու անուշ լեռ հովիկներից, քու նախնիների խոնջանքով վառուած հողից, ետ առի, ետ, փարիք քու նախնիների վանքերի ու ժամերի փլած որմերին, խորաններին, բարձրացիր աւերակուած բերդեր, աղօթիք հողին, լեռներին, ուժին, նախնիներիդ յաւերժութեանը, քու երկրի վրայ ծագող արեւին, պոռթկայ քեզ շնորհուած տիեզերական արարչական կենսութով, որը իր թեւերին յենած տարել է քեզ դարերին:

Քոյրերը իրենց եղբայրը մէջտեղ առած, քայլում են Գորիսի փողոցներով: Կանգնում են մի

Շաբ.բ էջ 18



**SAHAG-MESROB ARMENIAN CHRISTIAN SCHOOL**  
2501 N. Maiden Lane, Altadena, CA 91001

**OPEN REGISTRATION**  
FOR 2007-2008 SCHOOL YEAR  
FROM NURSERY TO 12<sup>TH</sup> GRADE

- Serving the community for 28 years
- Accredited by Western Association of Schools & Colleges (WASC)
- Accredited by Association of Christian Schools International (ACSI)
- Curriculum:
  - Elementary School:* We offer Armenian, Art, Bible, English, Math, Science, Social Studies, Computers, Music, Band, Physical Education, Drama, Recorders.
  - Middle & High School:* We offer U.C. approved College preparatory courses, Armenian, Art, Bible, English, American Literature, English Literature, Algebra I, Algebra II, Pre-Calculus, Physical Science, Biology, Chemistry, Physics, Civics, Health, Computer, U.S. History, World History, Band, Drama, Honors and AP courses in several core subjects.
  - Pasadena City College Bridge program:* We offer PCC college level courses on our campus in English, U.S. History, Political Science, etc.
- Extra Curricular:
  - Elementary School:* Extensive field trips, Speech Meets, Piano Festivals, Spelling Bee contests, Science Fairs, Concerts, Art Festivals, student programs for all festive and holiday occasions.
  - Middle & High School:* Extensive field trips, 7 days to the East Coast, 15 days to Armenia, overnight camping and nature hikes, Speech Meets, Piano Festivals, Spelling Bee contests, Science Fairs, Concerts, Art Festivals, student programs for all festive and holiday occasions.
- Faculty and Staff: Experienced teachers, mostly credentialed or masters degrees, ACSI certified, caring and professional.
- Students: We are student centered. Each student is nourished mentally, physically, spiritually, emotionally, in a family like safe and caring environment.
- Tuition: The most affordable of private schools.

**For more information Call the school office at 626.798.5020**

# ԱՌՈՂՋԱՊԱՇԱԿԱՆ

## ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ԶԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ԵՒ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԲԱԺԱՆՍՈՒՆՔՆԵՐԸ ԿՐ ՊԱՏՐԱՍՏՈՒՆ ԶԱՐԲՈՒԽԻ ԶԱՄԱՃԱՐԱԿԸ ԴԻՍԱԳՐԱԻԵԼՈՒ ԶԱՍԱՐ

Լոս Անճելոս Դպրոցների Կրթաշրջանը ուսուցողական DVD է թողարկում, որպեսզի դասարաններում օգտագործելով՝ աշակերտներին օգնեն եղանակային հարբուխից խոչ տալու եւ հարբուխի համաճարակի դէմ նախապատրաստուելու համար:

Աշակերտները եւ դպրոցների անձնակազմը բնակչության մեծագոյն հատուածներից են, որոնք ենթակա են եղանակային հարբուխի (զրիպի) առաջացրած բարդութիւններին: Լոս Անճելոս Քառնթիի Հանրային Առողջութեան բաժանմունքը եւ Լոս Անճելոսի Դպրոցներ Կրթաշրջանը այսօր յայտարարեցին, որ համատեղ ուժերով կ'օգնեն դպրոցների աշակերտներին եւ անձնակազմին սեզոնային հարբուխից չվարակուելու համար եւ կը համագործակցեն հարբուխի համաճարակի դէմ նախապատրաստուելու մարզում: Երկրի առողջապահութեան պատասխանատուները եւ դպրոցները միացեալ ուժերով կը կարողանան գործադրել կանխարգելիչ կարեւոր միջոցառումներ՝ հարբուխի սեզոնում երեխաներին համաճարակից զերծ պահելու համար:

Jonathan E. Fielding-ը, MD, MPH, հանրային առողջապահութեան վարիչը եւ Լոս Անճելոս Քառնթիի առողջապահութեան պատասխանատունն է: «Յատկապէս երեխաները ենթակա են հարբուխի վարակման, սակայն նրանց

օգնելու միջոցներ կան, որոնցով կարելի է նրանց զերծ պահել հարբուխից: Մեր համագործակցութիւնը Լոս Անճելոսի Դպրոցների Կրթաշրջանի հետ մի ընկերակցութիւն է, որի նպատակն է՝ քաջալերել սեզոնային հարբուխի եւ համաճարակի դէմ պարզ միջոցներով պայքարելու պատրաստուածութիւնը, կանխարգիլելու համար հարբուխի տարածումը՝ օրինակ՝ ձեռքերը լուանալով, հազի եւ փոշոցի ժամանակ բերնի եւ քթի առջեւ թաշկինակ պահելով, ձեռքերով դէմքը, քիթն ու բերանը չշօշափելով եւ հարբուխի դէմ սրսկում կատարելով»:

Իբրեւ սեզոնային եւ համաճարակ հարբուխի դէմ նախապատրաստման ծրագիր՝ Լոս Անճելոսի Դպրոցների Կրթաշրջանը, համագործակցութեամբ Հանրային Առողջապահութեան Դեպարտմենտի «Մաքուր Ձեռքեր» ծրագրի, արտադրել է ուսուցողական DVD ու լրացուցիչ նիւթեր եւ բաժանել է աւելի քան 800 դպրոցների՝ աշակերտներին օգնելու համար, որպէսզի ամբողջ տարին առողջ մնան:

David L. Brewer III-ը՝ Լոս Անճելոսի Դպրոցների Կրթաշրջանի անօրէնը նշեց. «Մեր երեխաներին եւ անձնակազմին օգնել, որ առողջ մնան, մեզ վստահեցնում է, որ սովորելու եւ յաջողելու ընթացքը չի խանգարուել: Այս DVD-ն բոլոր դպրոցներին տրամադրելով, որ աշակերտները սովորեն, թէ



ինչպէս առողջ մնան, մենք դիմում ենք կանխարգիլող քայլերի՝ նուազագոյնի իջեցնելով հարբուխի կամ համաճարակի ազդեցութիւնը մեր աշակերտների եւ անձնակազմի վրայ:

Լոս Անճելոսի Դպրոցների Կրթաշրջանի հետ համագործակցութիւնը մաս է կազմում Հանրային Առողջութեան «Մաքուր Ձեռքեր» ծրագրին, մի բազմամշակույթ եւ բազմալեզու հիմնական ծրագիր, որը կեդրոնանում է ձեռքերը լուանալու կարեւորութեան վրայ իբրեւ միջոց հարբուխից խոչ տալու համար:

«Մաքուր Ձեռքեր» ծրագիրը ցոյց է տալիս, թէ ինչպիսի հեշտութեամբ կարելի է հարբուխ մի անհատից մէկ ուրիշ անհատի փոխանցուել առօրեայ սովորական գործերի ընթացքում: Ծրագիրը ցոյց է տալիս, թէ ինչպիսի պարզ միջոցներով, օրինակ՝ ձեռքերը լուանալով, հազի ժամանակ բերնի

առջեւ թաշկինակ պահելով եւ հարբուխի դէմ սրսկուելով, կարելի է ոչ միայն անհատին առողջ պահել, այլեւ՝ նուազեցնել համաճարակի տարածումը:

Լոս Անճելոս Քառնթիի բազմազգ բնակչութիւն ունենալու պատճառով՝ «Մաքուր Ձեռքեր» ծրագիրը գործի դրուեց 12 լեզուով եւ 13 բնագաւառում՝ ներառեալ սպանախօսները, ասիացիները, ռուսները, հայերը, արաբները, սեւամորթները եւ ֆիլիպպայէս անկարող մարդիկ: «Մաքուր Ձեռքեր» ծրագիրը կեդրոնանում է երեխաների, գործարարների, կրօնական եւ այլ համայնքների պատկանող կազմակերպութիւնների, անհատների եւ ընտանիքների վրայ:

Հանրային Առողջութեան Դեպարտմենտը յանձնառու է՝ ապահովել եւ բարելաւել Լոս Անճելոս Քառնթիի շուրջ 10 միլիոն

Շաբ-ը էջ 19



**Wahib's**  
MIDDLE EAST RESTAURANT  
الشرق مطعم  
MEDITERRANEAN LEBANESE FOOD



**Wahib**

COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"

**CATERING FOR ALL OCCASION**

FAMILY ENTERTAINMENT  
BANQUET HALL  
EVERY FRIDAY ~ & ~ SATURDAY NIGHT  
INTERNATIONAL ~ ARABIC  
CALL FOR RESERVATION



**MOUHAMAD SALEM**  
& HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR

**BELLY~DANCING**



910~E.MAIN ST, ALHAMBRA, CA.  
TEL 626-281-1006 626-587-1048  
FAX 626-281-3641

# ԴԵՊԻ ԿԱՐՕՏԻ ՃԱՄԲԱՆԵՐ

Շարունակում է 15-ԷՋ

պատշգամի առաջ, Բակունց Ակսելի հայրենական տունն է այն: Արեւի ճառագայթներին բազմած, հեռու տիեզերքից այստեղ էր իջեւանել Զանգեզուրի հրաշամանուկներից մէկը, որ պիտի երգէր իր հողը, լեռները, նրանց լանջերէն ծաղկած ալպիական մանուշակի բոցրով լցնէր երկիրն իր: Յաւի կակիծով յայտնեց նրանց աշխարհին, որ իրենց երկրի սահմանները դեռ քար են ու պիտի փշուէլ այն: Եւ քսան տարեկան պատանին կամաւորագրուեց հայոց կուռին, գինուոր եղաւ, Սարգարապատի դաշտի մարտում հերոսացաւ: Իր «Միրհաւ»-ի կանչով, գովերգեց հայ շինականների հոգու գեղեցկութիւնը: Հայու ոգու ու նրա հողի սեւ ցեղերի սերմնացանը եղաւ: Ակսելը երգեց հայրենի բնութեան բանաստեղծական սքանչանք: Դաժան իրաւակարգը չհանդուրժեց նրա ոգու խոյանքը, մարեց նրա լոյսը, ափսոս: Քաղաքի կեդրոնում արձանացել է Ակսելը, ոտքերին փուռած ալպիական մանուշակները ժպտում են նրան:

Քայլում ենք քաղաքի փողոցներով, այստեղ շատ են քայլել, կարծես տիրոջ իրաւունքով են: Աշոտի, գուսան Աշոտի, տան դրան առաջն ենք: Կարծես իր երգերի անուշ հնչիւններն են գալիս, նրա քեամանչայի լարերի յոյզի թրթիռներն են: Կանգնում են որ նորէն ունկնդրեմ նրան, որ սրտիս կարօտին լոյս սհոսի: Գուսանը երգել է Զանգեզուրի «Մով Սարբեր»ը, բարձրացել լեռներ ու նրանց հովիտները երգ դարձրած հնչել որպէս «Սարի Միրուն Եար», մտել անտառներ, «Պիտրա»ների գմայլանքով արբենալու, «Բաղեր» տարել իր եարին, որ իր հայրենի այգիների բոցերի մէջ սէր գովերգէր: Հայրենի «Վանքում Տաթեւի» խորանի առաջ սիրոյ աղօթք է երգել: Աղբիւրների ակների պայթիթող ջրի հրճուանքից հորովելը արարել, իր քեամանչայի լարերից Զանգեզուր աշխարհը երգ դարձած հոսել հայոց սրտերին:

Փողոցին նայող երկայրկանի շէնքի պատշգամբի առաջ ենք, կարծես ինչ որ պարտադրուած են զգում կանգնել: Բացում են երեւակայութեան դարպասները, այստեղ Գորիսը, շրջանի շէնքերի հայերն են լեռնացել, պատշգամբում փամբուշտակալով խաչուած կրծքով, կրակ ժայթքող դէմքով հայոց արծուասիրտ զորավարն է Անդրանիկ Փաշան, իմ երազի հայու ոգու դիւցազնը: Զեռքերը դէպի հայոց աշխարհը պարզած, հայեացքը լեռներին չարած, փոթորկայոյց խօսքով դիմադրական կուռի է կանչում: Լեռնական շինականները վճռում են միանալ իր զորախմբին Արցախի հայութեան պաշտպանութեան զնալու: Եւ զնացել էին, երբ Շուշի բերդից սկսել էին գրոհել, նրանց դիմաց էր եկել Պաքուն գաւթած Անգլիական զօրքի հրամանատարութեան ներկայացուցիչ զօրավար՝ Թոմսընը, յայտնելով որ աշխարհամարտը աւարտուել է եւ յաղթական դաշնակիցները իրենց փոքրիկ դաշնակից Հայաստանին ըստ արժանուցի կը հատուցեն: Արմենական հոգով փաշան հաւատաց նեղ անգլիացուն, ետ վերադարձաւ Գորիս: Այդ նոյն շէնքում բանակցութեան հրաւիրեց անգլիացիներին, իր սեղանին Ռուսաստանի դրօշն էր: Նրանք

հարցրել էին ինք ում է ներկայացնում, պատասխանել էր Ռուսաստանին, եւ թէ նրանք անպայման կը վերադառնան այստեղ: Այո վերադարձան, կարմիր հեղեղ բերին Զանգեզուր, լոյսը մարեցին հայոց երկու տարեկան «մանչին»: Փաշա Անդրանիկ, դու ազնուագոյն հայ, ինչու անգլիացուն չյայտարարեցիր որ դու ներկայացնում ես Հայաստան աշխարհը՝ իր Զանգեզուրով, Արցախով, Սիւնեաց աշխարհով, Նախիջևանով եւ ամբողջ արեւելեան կողմն հայոց:

Գորիսի կեդրոնի գրօսայգուն թիկնած յուշարձանից ջուր է վազում, հայերի պաշտած ջուրն է հոսում ուռնների պատերազմում մարած հոգիների յաւերժութեան համար: Պաղ ջուր ընպեցի ցայտաղբիւրներից, նրանց հոգիներին խաղաղութիւն մաղթելով:

Քաղաքի կեդրոնում փոքրիկ հրապարակ կար այն ատեն, այնտեղ էն կառանում բեռնատար ինքնաշարժերը քաղաքից դուրս երթեւեկելու: Նորէն «Թուշում են մտքով» դէպի իմ կեանքի պատմութիւն, նրա բոլոր էջերի յուշերը՝ տխուր թէ ուրախ, հոգեկան անուշ անուրջներ են պարգեւում ինձ: 1947 թուական, աշնանային Զանգեզուրի լեռներ էր եկել Արմենակի բազմանդամ ընտանիքը, Շուռնուխի գիւղի փայտամշակման գործարանի բանուորական աւան: Յարմար աշխատանք չկար ընտանիքի բոլոր անդամների համար, Տօքթոր Արմենակը դարձեալ հրացան վերցրած, լեգէոնականի հպարտանքով, գործարանի դարպասում պահակ էր կանգնած:

Գործարանի Արցախցի տնօրէն՝ Եղիշէ Պալայեանը խորհուրդ էր տուել ինձ զնալ Գորիսի քաղաքային խորհուրդ նպատակալարմար աշխատանք խղնելու: Բեռնատար ինքնաշարժով Գորիս էի գնում, նրա ուղեւորները անուշ նայուածքներով նայում էին ինձ, հարցնում ինչ նպատակով էի Գորիս գնում: Իրիկուն էր արդէն երբ ինքնաշարժը կանգնեց այդ հրապարակում: Ուղեւորներից մի տարիքով կին, ձեռքիցս բռնելով որպէս իր մանչ, հրաւիրում էր ինձ իրենց տուն գիշերելու, նրա յամապնդումներին անգոր էի եղել դիմադրել եւ իրենց տան սեմին կանչում էր որ «Թէգէ կելին» հայ տղայ էր բերել հիւր, «Նոր եկող», այդպէս էին կոչում մեզ այդ լեռնականները: Այդ անչափ բարի, հիւրասէր, ազնուատեաք կինը, երեւի սիւնորդներից եղած լինէր, առաւօտեան դարձեալ ձեռքիցս բռնած տարաւ ինձ քաղաքային խորհուրդ, ներկայացրեց նախագահին, խնդրեց օգնել իրենց լեռներ եկած այս հայերին: Երբ քաղաքային խորհուրդը, ներկայացրեց նախագահին, խնդրեց օգնել իրենց լեռներ եկած այս հայերին: Երբ առիթ է եղել յաճախ են յիշել այդ գանգեզուրցի կնոջը, ուրիշ են, շատ տարբեր են, այդ լեռների մարդիկ:

Նոյն հրապարակում էի, գործարանի բանաւան վերադառնալու համար: Բեռնատար մեքենայի վարորդն էր կանչում որ Կապան էր մեկնելու: Մտեցել էի նրան, խնդրել ինձ Շուռնուխի տանել, թէ մի քանի օր է միայն որ վերադարձել էինք հայրենիք: Եւ որ դրամով փոխադրարձակի փոխարէն այրիչի քարեր վերցնել ինձանից, կտրուկ մերժեց: Շուռնուած կազնել էի, երբ

մեր խօսակցութեանը հետեւող մի մարդ մօտեցաւ եւ բղաւելով նրա վրայ ասեց՝ «Ամօթ քեզ, չես ամաչում երկիր եկած այս «թէգէ կելին» հայ տղայից դրամ ես պահանջում, առ իմ եւ նրա փոխադրավարձը, եւ ինձ առաջարկեց բարձրանալ ինքնաշարժի թափքին: Իմ կողքին էր նստել, հարցրեց թէ արդեօք չէի ճանաչում իրեն, թէ ինքը Շուռնուխի կոլխոզի՝ ատրպէճանցի նախագահ Օրուճն է: Ես այս չչիշատակեցի նրանց գովաբանելու համար, ընտանիքով սիրալիր յարաբերութիւններ էինք հաստատած եղել նրանց հետ: Թէկուզ սովետական տիրապետութեան պարտադրանքով, նախկին ատեւութիւնը ու թշնամանքը սկսած էր մեղմել: Երբ հայն ցանկացել էր իր հողում, իր նախնիների շէնքում ազատ ապրել, թաթարի բնագրական գարշանքն էր զարթնել, ուժով փորձել մարել Արցախի լեռնականների ընդվզման յորձանքը, սակայն տեսաք ինչ եղաւ, նրանք ոչ միայն իրենց լեռների դարպասները ամուր պահեցին, այլ նաեւ վռնտեցին շրջապատի տարածքներից եւ իրենց կուռից քրտնած դէմքերը ցողեցին Մայր Արաքսի քրքջացող ջրերում: Սակայն այս էլ մի լաւ բան է, պարտադրուած ենք իրար կողքի

ապրելու: Մուսա Լեռն են բերել Զանգեզուր, «Մուսա Լեռան Ողջոյն» հեղինակած գիրքս: Որպէս ուխտաւոր, դպրոցների գրադարանների, համալսարանների դռներն են թակում, ափիս վրայ որպէս նշխար գիրք են մեկնում, նրա ճակտաից լեռան հերոսամարտի յուշարձանի դիւցազնութեան լոյսը շողելու գանգեզուրցիների սրտերին: Յուշարձանը որպէս խաչ բռնած երկարում էի ուսուցիչներին, դասախօսներին, նայում էի նրանց դէմքերի ժպիտների ցոլքերին, կարծես սրբութեան սրբոց հաց էին վերցնում ձեռքիցս, գիրքը հացի համագօր է եղել հայու համար, թող առատ լոյս հոսի նրանց սրտերին: Այս ցեղի սրտին հոսած Տիեզերական կենսութիւնը բազում, բազում անգամներ հրաբխացել է հայոց լեռներում: Եւ Քարթլու Վրաց աշխարհից այստեղ եկած Դաւիթ Բէկը լեռնականների հետ գարկաւ օսմանցուն, դարձեալ ազատութեան հողմերը թեւածեցին սիւնեաց աշխարհի լեռների վրայ: Ափսոս որ շուտ հանգաւ այդ հայրենաշունչ դիւցազնի լոյսը եւ իր գօրավարները չկարողացան վար պահել նրա վառած ազատութեան լոյսը:

# ՍԱՐԳԻՍ ՎԱՐԱԳՆ ԳՆԱՅԱՏՈՒԵՑԱՒ

Շարունակում է 7-ԷՋ

րին, զգայնութեամբ եւ բարեխառնութեամբ, նոյնիսկ լեզուամտածողութեամբ եւ շարահիւսութեամբ իր ակունքները կը գտնէր հայկականին մէջ եւ կը մնար նաեւ արդիական»:

Այնուհետեւ Թէքէեան Մշակութային Միութեան Ատենապետ, Ժամօթ հրատարակագիր Վաչէ Սէմէրճեան, անգամանօրէն ներկայացուց օրուան յոբելէար, այլազան գրական եւ մշակութային իմբաւորներու մաս կազմած, աւելի քան ինը ամսաթերթերու ու պարբերաթերթերու իր աշխատակցութիւնը բերած, աւելի քան վեց գիրքերու հեղինակ եւ գրական մրցանակներու արժանացած Սարգիս Վահագնը: Ան իր խօսքին աւարտին, յայտնեց իր բարեմաղթութիւնները ի ինդիւր անոր քաջաւորութեան եւ յետագայ տեղծագործական արդիւնաբեր աշխատանքներուն յաջող ձեռքբերման:

Օրուան հանդիսավար Բարսեղ Քարթալեան կարդաց յոբելէարին 80-ամեակը եւ թարգմանական նոր գործը շնորհաւորող շարք մը շնորհաւորական նամակներ, որոնք առաքուած էին իր հարազատներուն, Հայաստանի Գրողներու Միութեան Նախագահ Լեւոն Անանեանի, Կամար» ի իմբազորութեան եւ Քալիֆորնիայի Գրողներու Միութեան կողմէ: Հաճելի էր լսել Վահագնի 12 տարեկան թոռնիկին անգլերէն լեզուով շարադրած շնորհաւորագիրը ուղղուած իր մեծ հօր, զոր կարդաց անոր մեծ մայրը, Տիկ. Հայկուհին

Այնուհետեւ, հերթաբար սրտի խօսքով ելոյթ ունենալու համար բեմ բարձրացան ծանօթ բանաստեղծուհի Ալիսիա Կիրակոսեան, որ բարձր գնահատեց թարգմանուած գիրքի բանաստեղծական ոգին եւ ոճը: Բանաստեղծ Յարութիւն Մաթեան, իբրեւ վաղեմի բարեկամը յոբելէարի՝ վեր առաւ անոր նախաձեռնող ոգին ու գրական արժանանիքները: Հաճելի էր Մասիս Արարատեանի՝ լրիւ հիւժմուռով արտայայտութիւն գտած ելոյթը: Արարատեան ուրախ էր, որ «անգամի մը համար Վահագն պիտի չկարենար ընդմիջել գինք»:

Լիլիթ Քէհէեան անդրադարձաւ ու գնահատեց Վահագնի արձակը, ուր հարազատօրէն կ'ուրուագծուի հեղինակին զգացական ապրումները: Տօքթ. Գէլորդ Քէշիշեան ծանրացաւ Վահագնի խստապահանջ նկարագրի գիծերուն վրայ, գիծեր՝ որոնք կը տեսնուին իր անձնական ու գեղարուեստական գործերուն մէջ: Փրոֆ. Օշին Քէշիշեան բարձր գնահատեց 2004 թ. լոյս ընծայուած «Աշիլ Կորքի» գործը եւ թելադրեց ներկաներուն կարգալ գանիկա: Յատուկ երգացանկով հանդէս եկաւ ծանօթ երգչուհի Անահիտ Չատոյեան, որուն դաշնակի վրայ ընկերակցեցաւ Կարինէ Հայկեան:

Հանդիսութիւնը իր աւարտին հասաւ Սարգիս Վահագնի շնորհակալական խօսքով, զրքին գինեձօնով, իմբաքին նկարահանումով եւ հիւրասիրութեամբ:

Թող վառ մնայ գրիչդ, սիրելի գրչեղբայր՝ Սարգիս Վահագն:

# «ELON»Ի ԴԱՍԵՐԳՈՒ

Շարունակում է 7-ԷՋ

րեղութեան եւ որակին: \*\*\*

Զեռնարկի կազմակերպիչ միւսերը կը կոչուէր «Մանուկներու համար արուեստագէտներ» կազմուած գողութի ծանօթ մշակույթի ծառայողներէն եւ արուեստագէտներէն: Սոյն միւսերի անունով ալ ձեռնարկին բացումը կատարեց համակրելի հանդիսավար մը:

Յայտարարուեցաւ նաեւ որ սոյն ձեռնարկին հասուցիւր պիտի տրամադրուի «Հայկական Ողնածուծի Նուիրատուութեան Հիմնարկի», որուն դեկավար Տօքթ. Յրիտա ձըրտան շնորհակալական խօսքերով ելոյթ ունեցաւ:

Ինչպէս ըսինք սկիզբը, զարմացող, սպաւորող եւ մասամբ մըն ալ, գոհացող ձեռնարկ մըն էր, որուն համար շնորհաւորելի են կազմակերպիչները եւ «Elon»ը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԵՒՐՕ - 2008 ԶՏՈՒՄԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ ԱՌԱՋԻՆ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐ ԸԱՅԱՍՏԱՆ - ԼԵՒԱՍՏԱՆ 1-0

Ֆուտբոլի Հայաստանի հաւաքականը Չորեքշաբթի օրը պատմական յաղթանակ մը տօնեց՝ 1:0 հաշուով առաւելութեան հասնելով «Եւրօ-2008»-ի ընտրական Ա խմբի առաջատար Լեհաստանին: Սա անկախացած Հայաստանի ամենամեծ ֆուտբոլային յաջողութիւնն էր:



Հայաստան-Լեհաստան խաղի աստղ Համլէթ Մխիթարեան

Հաւասար պայքարում ընթացած խաղի միակ կողմը 66-րդ րոպէին խփեց Համլէթ Մխիթարեանը՝ անվրէպ իրացնելով 25 մետր հեռավորութեան վրա նշանակուած տոգւանային հարվածը:

Խաղի հետո «Հանրապետական» մարզադաշտ եկած հազարաւոր ֆուտբոլասերներ Հայաստան վանկարկելով, մոտ 30 րոպէ չէին հեռանում մարզադաշտից: Սա իրոք մեծ յաջողութիւն էր Հայաստանի եւ մեծ անակնկալ ֆուտբոլային Եւրոպայի համար:

Հանդիպումից հետո կայացած մամուլի ասուլիսին ներկայացաւ միայն մեր թիմի գլխաւոր մարզիչ Եան Պորտերֆիլդը, իսկ լեհերի գլխաւոր մարզիչ Լեո Բենհակերը հանդերձարանի մոտ կազմած անընդհատ ծխում էր եւ ի վիճակի չէր հանդիպել լրագրողներին:

Եան Պորտերֆիլդը նշեց, որ այս յաղթանակը ոչ միայն հայկական ֆուտբոլի, այլեւ Հայաստանի յաջողութիւնն էր. «Շնորհակալութիւն երկրպագուներին բուն աջակցութեան համար: Պետք նշենք, որ իրոք յաղթեցին մրցակցի, որը շատ ուժեղ է եւ նախքան այս 6 խաղում անընդմեջ յաղթանակ էր տոնել: Սա մեծ հաղթանակ էր մեզ համար»: Սկիտլանտաացի մասնագէտը շնորհակալութիւն հայտնեց դարպասապահ Գեւորգ Կասպարովին փայլուն խաղի, իսկ Համլէթ Մխիթարեանին փայլուն կոլի համար:

ՂԱԶԱԽՍՏԱՆ - ԸԱՅԱՍՏԱՆ 1-2

Ֆուտբոլի Հայաստանի հաւաքականը վերջապէս յաղթանակ տօնեց: Հայ ֆուտբոլիստները 2:1 հաշուով հիւրընկալուելիս պարտութեան մատնեցին Ղազախստանի հաւաքականին:



Ղազախստան-Հայաստան յաղթանակէն ետք

«Եւրօ-2008»-ի ընտրական այս խաղում ֆաւորիտ էին համարուած ղազախները, սակայն Հայաստանը անակնկալ մատուցեց պարտութեան մատնելով Ղազախստանը:

Հայաստանի հաւաքականի կազմում առաջին կողմը 33-րդ րոպէին խփեց Ռոբերտ Արզումանեանը: 38-րդ րոպէին մեր ֆուտբոլիստները Սամուէլ Մելքոնեանի շնորհիւ վաստակեցին 11 մետրանոց տուգանային հարուած, որը անվրէպ իրացրեց Սարգիս Յովսէփեանը: Հանդիպման աւարտից 4 րոպէ առաջ հանդիպման չէին մրցավարը 11 մետրանոց յօրինեց մեր թիմի դարպասին եւ ղազախները կարողացան կրճատել հաշուի տարբերութիւնը:

Ի դէպ, ընտրական նախորդ 5 հանդիպումներում Հայաստանը ընդամենը 1 միակողմ էր վաստակել՝ չխփելով ոչ մի գնդակ:

ՇՆՈՐԸԱԿԱԼԻՔ

Տիկ. Ազնիւ Թոմոնեան եւ զաւակները Գոհար եւ Անթընի շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց որոնք մասնակից եղան իրենց սուգին՝ ՍԱՐԳԻՍ ԹՈՄՈՆԵԱՆԻ մահուան ու քառասունքին առթիւ իրենց ծաղկեպսակներով, հեռաձայնով, այցելութեամբ ու փոխան ծաղկեպսակի նուիրատուութեամբ:

Թոմոնեան ընտանիքը յատուկ շնորհակալութիւն կը յայտնէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հովիւ Հոգշ. Ասպետ Վրդ. Պալեանին, Սահակ-Մեսրոպ վարժարանի Տնօրէնութեան եւ ծնողաուսուցչական կազմին, Հ.Մ.Մ.ի վարչութեան եւ «Մասիս» շաբաթաթերթին:

ԵՒՐՕ - 2008 ԶՏՈՒՄԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ

Table with 2 columns: Group 2 and Group 6. Rows include national teams like Georgia, Armenia, Azerbaijan, and their match results.

Table with 2 columns: Group 2 and Group 6. Rows show aggregate statistics for national teams like Georgia, Armenia, Azerbaijan, and their match results.

Table with 2 columns: Group 2 and Group 6. Rows include teams like Armenia, Georgia, and Azerbaijan with their match results.

Table with 2 columns: Group 2 and Group 6. Rows show aggregate statistics for teams like Armenia, Georgia, and Azerbaijan.

Table with 2 columns: Group 2 and Group 6. Rows include teams like Georgia, Armenia, and Azerbaijan with their match results.

Table with 2 columns: Group 2 and Group 6. Rows show aggregate statistics for teams like Georgia, Armenia, and Azerbaijan.

Table with 2 columns: Group 2 and Group 6. Rows include teams like Georgia, Armenia, and Azerbaijan with their match results.

Table with 2 columns: Group 2 and Group 6. Rows show aggregate statistics for teams like Georgia, Armenia, and Azerbaijan.

Table with 2 columns: Group 2 and Group 6. Rows include teams like Armenia, Georgia, and Azerbaijan with their match results.

Table with 2 columns: Group 2 and Group 6. Rows show aggregate statistics for teams like Armenia, Georgia, and Azerbaijan.

Table with 2 columns: Group 2 and Group 6. Rows include teams like Georgia, Armenia, and Azerbaijan with their match results.

Table with 2 columns: Group 2 and Group 6. Rows show aggregate statistics for teams like Georgia, Armenia, and Azerbaijan.

Table with 2 columns: Group 2 and Group 6. Rows include teams like Georgia, Armenia, and Azerbaijan with their match results.

Table with 2 columns: Group 2 and Group 6. Rows show aggregate statistics for teams like Georgia, Armenia, and Azerbaijan.

### ՊԱՍՔԵԹՊՈԼ Հ.Ե.Ը. - Հ.Մ.Մ. ՏԱՐԵԿԱՆ ՄԱՐԶԱԽԱՂԵՐ



Հ.Մ.Մ. Փասատինայի կազմը



Հ.Մ.Մ. Կլեմտյի կազմը

Հ.Ե.Ը.ի Արեւմտեան Ամերիկայի Շրջանային Վարչութեան կազմակերպած գարնանային մարզախաղերու աւարտական պասքեթպոլի խաղերը տեղի ունեցան Երեքշաբթի Մայիս 2, 2007ին Երեկոցեան ժամը 9:00ին Ալեք Մանուկեան մարզադաշտին վրայ, ներկայութեամբ Հ.Մ.Մ.ի եւ Հ.Ե.Ը.ի վարչութեան մարզական պատասխանատուներուն: Օրը զուգակցեց Սարգիս Աղիկեանի վաղաժամ մահունան, որ պատահեցաւ ինքնաշարժի արկածի հետեւանքով, ընկեր Մանուկ Տէփոցեան խնդրեց մէկ

վայրկեան յոտընկաջս լուծելու պահել առ ի յարգանք ողբացեալ ընկերոջ: Նկատի ունենալով մարզախաղերու ժողովրդականութիւնը, ակնյայտ էր մրցող խումբերու գեղեցիկ խաղարկութիւնը, մասնաւորապէս Հ.Մ.Մ.ի մեր մարզիկներու մօտ: Մարզասէր մեծ հանդիսատեսներու ներկայութեամբ, խանդավառուած մարզիկները իրենց բարձր խաղարկութեամբ ելեկտրականացուցին մթնոլորտը: Ուժեղ հետաքրքրութիւն յառաջացուցին ներկայ մարզասէր հասարակութեան մօտ:

### ՀԱՐԲՈՒԽԻ ՀԱՍԱՃԱՐԱԿ

Շարունակուած էջ 16-էն

ընակչութեան առողջութիւնը: Զանազան ծրագրերի եւ համայնքային ընկերակցութեան ու ծառայութիւնների միջոցով Հանրային Առողջութեան Դեպարտմենտը վերահսկում է միջավայրի առողջութեան վրայ: Դեպարտմենտում ընդգրկուած են աւելի քան 4000 աշխատողներ, իսկ տարեկան պիւտճէն անցնում է 700 միլիոն տոլարի սահմանը: Հանրային Առողջութեան Դեպարտմենտի մասին չաւելեալ տեղեկութիւններ ստանալու համար, խնդրում է այցելել պատկան կայքէջը [www.lapublichealth.org](http://www.lapublichealth.org) հասցէով: Լոս Անճելոսի Դպրոցների

Կրթաշրջանը եւս դիմել է մի շարք միջոցառումների համաճարակի դէմ նախապատրաստուելու համար. օրինակ՝ «Հագի եւ փոշոցի կարգաձեւ»ին վերաբերող նիւթերի առաքում դպրոցներին, որոնց մէջ շեշտուել են՝ ձեռքերի յաճախակի լուանալու կարեւորութեան, համաճարակի դէմ պայքարելու ծրագրի մշակման եւ Կրթաշրջանի ու առողջապահութեան պատկան գործակալութիւնների միջեւ հաղորդակցութեան ուղղակի կապի հաստատման մասին: Լոս Անճելոս Դպրոցների Կրթաշրջանը նաեւ հաստատել է հարբուխի համաճարակի կայքէջը [www.lausd.oehs/pandemicflu.asp](http://www.lausd.oehs/pandemicflu.asp) հասցէով:

«ԿԱՅԾ» Երիտասարդական Նուագախումբը Պէտք Ունի Հայերէն երգերու Ծանօթ Երիտասարդ Երգիչ Կամ Երգչուհիի Հետաքրքրուողները Կրնան Հետաձայնել Ռազմիկին՝ 818-590-2824

### ԱՄՈՒՍՆԱՅԵԱԼՔ

ՀՐԱԶ ՄԱՐԳԱՐԵԱՆ  
ԸՆԴ  
ՆԷՆՍԻ ՄԱՆՍՈՒՐ  
Շաբաթ, 2 Յունիս, 2007

Մեր ջերմ շնորհաւորութիւններն ու լաւագոյն բարեմաղթութիւնները ամուսնացեալ զոյգին եւ անոնց ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար՝ Տէր եւ Տիկին Ընկ. Պօղոս եւ Արփի Մարգարեաններուն:

\*\*\*\*\*

ԵՐՈՒԱՆԴ ՊԱՊԱՅԵԱՆ  
ԸՆԴ  
ՔՐԻՍՏԻՆ ԱԲԳԱՐԵԱՆ  
Շաբաթ, 2 Յունիս, 2007

Մեր ջերմ շնորհաւորութիւնները ամուսնացեալ զոյգին, անոնց ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար՝ Պապայեան, Աբգարեան, Գարայեան եւ Գարակէօզեան ընտանիքներուն:

### ՇՆՈՐՀԱԽՈՐԱՆՔ

Միհրան Խաչատուրեանի ընդ թամար Փափիրեանի ամուսնութեան բարեբաստիկ առիթով՝ Հ.Մ.Մ.ի վարչութիւնը ջերմօրն կը շնորհաւորէ նորապսակ զոյգն ու անոնց համայն պարագաները, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Ընկ. Նորայր եւ Մարի Խաչատուրեանները, մաղթելով երջանիկ տարիներ:



Հ.Մ.Մ. Փասատինայի կազմը կը ստանայ խոյանական բաժակը

Պասքեթպոլի խաղը աւարտեցաւ ի նպատակ Հ.Մ.Մ. Փասատինայի (Հ.Մ.Մ. 63 - Հ.Ե.Ը. 58) որ գրաւեց առաջին, արժանանալով խոյանական բաժակին: Խաղերուն յաջորդեց յաղթանակի ճաշկերոյթ-պարահանդէս մը, որ տեղի ունեցաւ Յունիս 2ին, Ալեք Մանուկեան կեդրոնէն ներս: Հարիւրաւոր հայրերներու ներկայութեամբ, Հ.Մ.Մ.ի մարզիկները բեմ բարձրացան Հ.Ե.Ը.ի մարզական պատասխանատուներուն հրաւերով, ստանձնելու համար խոյանական բաժակը: Անոնց ուրախութիւնը անսահման էր եւ աշխատանքն ու յարատեւութիւնը գնահատուած: Հ.Մ.Մ.-Հ.Ե.Ը. խաղերը պիտի շարունակուին: Մանրամասնութիւններուն կրնաք հետեւիլ «Մասիս» շաբաթաթերթի միջոցաւ: Վարձքերնիդ կատար տղաք, մնաք միշտ յաղթական եւ մարզական բարձր հոգիով:

# ՄԱՍԻՍ

## ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to **Massis Weekly**

Enclosed a check for (one year) \* \$50,00 for USA  
 \* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.  
 \* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
 Address: -----  
 City: ----- State: ----- Zip Code: -----  
 Country: -----  
 Tel: ----- Fax: -----

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

Բեղմնաւոր Անցեալ,  
Լուսաշող Ապագայ:



Proud Past,  
Exciting Future.

**AGBU SOCIETY DINNER - OCTOBER 13, 2007**  
HUNTINGTON RITZ CARLTON HOTEL - PLEASE MARK YOUR CALENDARS

AGBU Pasadena Chapter Cultural Committee

Presents

# Art Classes

Bring out the inner artist in your child.

Raffi "Bo" Boyadjian, Instructor

Ages 6 and Up

LESSONS OFFERED EVERY FRIDAY NIGHT

Session One: 6:00 - 7:00pm

Session Two: 7:00 - 8:00pm

The Art Room - AGBU Pasadena Center

2495 E. Mountain Street, Pasadena, CA 91104

For more information, please call (626) 794-7942

AGBU Pasadena Chapter

## SUMMER BASKETBALL CLINIC

- Learn the game of basketball
- Improve your technique
- Make friends & have fun

TWO SESSIONS:

Session One: July 23 - July 27

Session Two: July 30 - Aug 3

NOON - 1:30 PM 8-10 yr. old Boys & Girls

2:00 - 3:30 PM 11-12 yr. old Boys & Girls

4:00 - 6:00 PM 13-14 yr. old Boys & Girls

ONLY 100 PER SESSION

Basketball T-Shirt Included

AGBU Pasadena Center

2495 E. Mountain St., Pasadena, CA 91104

SIGN UP NOW

Mon-Thurs 6-8 at the AGBU Center

For more information,  
contact Mr. Hratch Mankerian at 626-705-2675



## AGBU / AYA SCOUTS Glendale / Pasadena Chapter



### SCOUTS SUMMER CAMP 2007

Lake Isabella / Kern County

August 4 - 12, 2007

Cubs, Webelos, Juniors & Brownies Ages 7 - 11

Boy Scouts & Girl Scouts Ages 12 - 17

*Join us now and attend  
summer camp with the troop!*

"Havak" every Saturday 3:00 - 5:00 pm

AGBU Pasadena Center

2495 E. Mountain St., Pasadena, CA 91104

For more information, please call (626) 794-7942

## AGBU GLENDALE / PASADENA CHAPTER YOGA YOGA YOGA COME JOIN US IN A FUN CLASS GUARANTEED TO CHALLENGE YOUR MIND AND BODY!

Mariette is a certified hatha flow yoga instructor and a registered nurse who teaches yoga in the community and to healthcare professionals.

Yoga is a holistic practice which utilizes your body's own energy powerhouse to optimize wellness in the body and mind.

Yoga is neither a religion nor simply a "workout".

LIMITED SPACES

For reservation or information, call A.G.B.U. office (626) 794-7942



THE QUALITY AND SAFE ALTERNATIVE FOR YOUR CHILD'S HIGH SCHOOL EDUCATION

2007-2008 ACADEMIC YEAR

GRADES 9 - 12

For registration information, a campus tour and meeting with the principal, please call (626) 794-0363



AGBU SPONSOR



6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • commercecasino.com

